

389
390
391

2(077)
J.15
1928

Գ Ա Ս Ա Ֆ Ի Բ Ք

Կ Ր Ո Ն Ւ

ՈՒՂԵՑՈՅՑ ՀԱՅ ԿՐՈՆԱԽՍՈՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Գնացէք այսուհետեւ
„աշակերտեցէք զամե-
„նայն հեթանոսս....:
„Աւսուցէք նոցա պա-
„հել զամենայն որ ինչ
„պատուիրեցի ձեզ„:
ՄՊԼ. իր. 19. 20.

Ն Ո Ր—Ո Ւ Խ Տ Ւ

Ն Ի Ի Թ Ի Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ

ՀԱՏՈՐ Բ. ՄԱՍԻ Ա. ՏԵՏՐ Ա.

Գ Ա Ս Ա Խ Օ Ո Ւ Յ

Ներսիսեան դպրանոցի ստորին դասաւ. աշակերտներին

ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՅ

(Միաբան Մողնւոյ սուրբ Գէորգ եկեղեցւոյ)

Նիւթիս մշակութեան հիմք կազմող հատուածները տպած են
առանձինն՝ „Սրբազն պատմութիւնն“ նոր-ուխտի անունով:

ТИФЛИСЬ

Типографія И. МАРТИРОСІАНЦА Орбел. ул., д. № 1—2.

Ն Ա Ր - Ո Ւ Խ Տ

Дозволено цензурою Тифлисъ 7-го Сентября 1892 года.

§ 41

ՏԱՄՆ ԿՈՅՍԵՐԻ ԱՌԱԿԸ

Ն պ ա տ ա կ: Վերնագիրը:

I

Նկարագրել մեր հարսանեաց հանդէսը՝ շէշտելով այն կետերը, որոնք լուսաբանում են առակը:

II

Ա ւ ա ն դ ե լ նոր նիւթը (Պատթ. իէ. 1—13)

Կ ո ւ լ տ ո ւ ր ա կ ա ն—պ ա տ մ ա կ ա ն տեղեկութիւններ: Հիմնուելով պատմած նիւթի վրայ՝ աշակերտներին պէտք է մի գաղափար տալ հրէից հարսանեաց սովորութիւնների մասին: — Հարսի տանը մի քանի օր շարունակ ուրախութիւն էր լինում, որից յետոյ փեսան զիշերով իւր բարեկամների հետ՝ զարգարուած գալիս էր և հարսին, նոյնպէս զարդարուած, իւր տուն էր տանում: Փեսային զիմաւորելու համար հարսի հետ դուրս էին գնում: Նրա ընկերուհիները երգելով և ձողի ծալրին ամրացրած լապտերներով: Բայց լապտերներից վերցնում էին իրանց հետ պղնձէ ամանով ձէժ ևս, որպէսզի կարիք եղած ժամանակն ածէին լապտերների մէջ: Երկու խմբերը միանալով՝ մտնում էին փեսայի տունը, ուր պատրաստուած էր լինում ճոխ սեղան — սա էր իսկապէս հարսանիքի ճաշը: Հարսանիքը տևում էր 7 օր, փեսան գլխի վրայ ունենում էր թագ: Հարսին ուղեկցողները, ինչպէս երեսում է, քնել էին փեսայի ուշանալու պատճառով: Փեսան, դուցէ մի արգելառիթ հանդամանքի պատճառով, ուշանում է և գալիս է մի այնպիսի ժամանակ, երբ կոյսերը ամենելին չէին սպասում:

Պ ա ր գ ե լ նիւթը: Ի՞նչու կոյսերից ոմանք իմաստուն և ոմանք յիմար են կոչում: Ո՞ւր և ե՞րբ է յայտնուում այդ իմաստութիւնը և յիմարութիւնը: Իսկապէս ի՞նչն էր յիմարութեան պատճառը (անզգուշութիւնը չհսկելը): Ո՞րն է նրանց անզգուշութեան պատիթը: Ի՞նչպէս էք հաւանում այն արարքը, որ փեսան հինգ ուշացող կոյսերին թողլ չի տալիս ներս մտնելու: Կոյսերն ի պատիւ փեսայի են ընդ առաջ եկել: Արդեօք խստութիւն չէ փեսայի կողմից մի այդպիսի թեժև սխալի համար կոյսերին զըկել հարսանեաց ճաշից:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ: Տասն կոյսերը մենք քրիստոնեալքու ենք, փեսան Քրիստոսն է. այն ճանապարհը, որով փեսալի առաջն են դուրս գալիս, մեր կեանքի ուղին է. Հարսանիքի ճաշը երկնալին ուրախութիւնն է, որը Քրիստոս ընտրեալների համար պատրաստել է. փեսալի գալուստը տիրոջ գալուստն է, որին մենք հոգեպէս ընդ առաջում ենք հանդերձեալ կեանքում, ուր քրիստոնեայ սրտերը ներքին կերպով՝ յաւիտենականապէս միանում են Աստուծու և Փրկչի հետ: Փեսան կզայ, երբ կեանքի վերջին ժամը կհնչէ—մահուան օրը Տիրոջ օրնէ: Ոչ մի քրիստոնեալ չգիտէ, թէ այս օրը երբ կդայ, բայց թէ կդայ, այդ անկասկած է: Բարի քրիստոնեան գիտէ, որ այս յաւիտենական և ներքին միաւորութիւնն ի տէր՝ երկնից արքայութեան մէջ՝ պայմանաւորեալ է, որ այստեղ՝ երկրիս վրայ պէտք է կատարէ և լրացնէ: Առակի մէջ տէրն էլ այդ պայմանների մասին է խօսում: Հապա գտէք, ո՞րն է այդ պայմանները:

Քրիստոնեաները պէտք է Քրիստոսի առաջ դուրս գան, ինչպէս կոյսերը փեսալի: Քրիստոնեաներն ամեն ըոսէ իրանց կենցաղավարութեամբ պիտի սպասեն փեսալին ծառայելու և նրա ուրախութեանը մասնակցելու: Սակայն քրիստոնեայք իրանց կենցաղավարութեամբ, սրտով և մտածողութեան եղանակով իրար չեն նմանում—ոմանք իսկ և ոմանք կեղծ քրիստոնեաներ են—ուրիշ խօսքով ասենք՝ նրանցից ոմանք իմաստուն և ոմանք յիմար կոյսերին են նմանում:

Յ ի մ ա ր կ ո յ ս ե ր ը նրանք են, որոնք փոքր ցանկութիւն ունին միանալու տիրոջ հետ, դրա համար էլ անհոգ և անփոյթ են նրան ընդունելու պատրաստութեամբ: Նրանք թէ-և հաւատ ունին իրանց սրտերում (ձէթ լապտերների մէջ) և իրանց կեանքի ընթացքում սիրոյ նշոյլ ցոյց են տուել (լուսոյ բոցը), բայց կ ա ր և ո ր հաւատը չունին, դրա համար էլ սիրոյ լոյսը երկարատև և պարզ չէ վառում: Այդպիսիք յաճախակի խօսում են Քրիստոսի մասին, հաւատում են նրա քարոզութեան, այլև ինչ որ ուրիշները նրա մասին քարոզել են, բայց իրանց սիրոյ ամբողջովին չեն նուիրում նրան: Այդպիսիք սիրում են միայն երկրաւոր զուարձութիւնները. դրանք իրանց սիրութեան հսկում, այլ թոյլ են տալիս ամեն տեսակ չարիք ներս մտնելու—կարծ՝ այդպիսի քրիստոնեաներն են, որ հոդ և փոյթ

չունին միանալու Փրկչի հետ: (Թանձրացեալ օրինակներ):

Ի մ ա ս տ ո ւ ն կ ո յ ս ե ր ը նրանք են, որոնց ամենաջերմ ոէրը և ամենաթանկագին զանձը Քրիստոսն է. որոնք նոյն իսկ այստեղ միացած են (միատեսակ սիրութեան): Դրա համար էլ ի սրտէ ձգտում են կատարելապէս միանալու նրա հետ: Այսպէս՝ նրանք ընդ միշտ իրանց սիրուն ամբողջապէս Փրկչին են նուիրում՝ թէ խօսքով և թէ գործով: (Թանձրացեալ օրինակներ): Ուրեմն այդպիսիք իրանց կեանքի ընթացքում տիրոջ գալստեանը միշտ սպասում են և սրտով արթուն են—դրա համար էլ հարազատ քրիստոնեաներ են կոչւում:

Չէ որ իմաստուն կոյսերն էլ քնած էին, երբ փեսան ե-իաւ:—Հարազատ քրիստոնեաներն էլ սուրբեր չեն—բարի քրիստոնէի քրիստոնէական սիրութ ևս երկեմն քնած է լինում (վիճող և յուսահատուղ աշակերտները—տ. ն—ո § 36). այդպիսիների հոգեկան աշխարհում ևս մի րոպէ սխալը տիրապետող է լինում (օրինակ): Թէև այդ այդպէս է, բայց և այնպէս դրանց սրտի խորքում կենդանի է հին հաւատը, հին ջերմ սէրը և որ գլխաւորն է, այնտեղ թագաւորողը Քրիստոսն է: Եթէ մահը մի այդպիսի արդարի կեանքի դուռը անակընկալ կերպով բաղնէ, նա գարձեալ պատրաստ է, որովհետեւ այդպիսին իւր կեանքի ընթացքում միշտ պատրաստ է եղել, իսկ անհոգ, անփոյթ քրիստոնեան այսպէս չէ, նա ոչ մի անգամ իսկապէս պատրաստ չէ եղել:

Իմաստուն կոյսերի լապտերները լի են ձէթով և բացի դրանից ամանում ևս աւելորդ ձէթ ունին: Լապտերը նշանակում է սէր, իսկ իւղը՝ հ ա ւ ա տ: Իմաստուն կոյսերը զինուած, պատրաստ են ամ են դէպիքի համար—նրանք սէր և հաւատ ունին իրանց սրտում: Այսպէս չեն յիմար կոյսերը, որոց սէրը մարել է, որովհետեւ նրանց հաւատի ձէթը, որը սիրոյ կրակին ո յ ժ և զ օ ր ո ւ թիւն էր տալիս, չքացել է: Կեանքի երջանիկ օրերում երբէք չեն մտածել իրանց սիրութ սիրով և հաւատով լցնելու. երբ յանկարծակի կեանքի կէս գիշերին ձայն է լսում, թէ վեսան գալիս է հարսին հայրենի տունը տանելու, այն ժամանակ միայն զգում են իրանց սրտի դատարկութիւնը, սիրոյ և հաւատի պակասութիւնը: Եթէ նրանք իրանց անձը հսկել էին, քնի բազուկների մէջ հոգեպէս չէին

ընկել. կեանքի ընթացքում անհստ չէին եղել. մահուան ըոպէին երկի ի ի և զ կրելու կարիք չէին զգայ՝ խաղաղութեան դեսպանի առաջ: Նրանց մեծ սխալանքն այն է, որ քննել էին, անհստ էին, ուշ զգացին իրանց հոգեսոր կեանքի սիրուց զուրկ լինելը, ուստի և լապտերը մօտիկ է հանգչելու. նոր զգացին, որ փեսան չի ընդունի իրանց՝ մինչև որ սրտները լի հաւատով և սիրով չընդառաջնեն:

Յիմար կոյսերը մեծ կարիք ի մէջ են. նրանց չի կարելի չպարաւաել, երբ վերջին բոսէն միայն օգտաւէտ ձեռով են կամենում գործադրել և այսպէս վտանգը հեռայնել: Սրա համար գիմում են ի մաստուն կոյսերին և խնդրում են, որ մի փոքր իրանց հաւատից և բարի գործերից բան տան: Բայց ափսոս որ Աստուծու արքայութեան մէջ աւել որ գ բարի գործ չկայ—այստեղ բարի գործը ոչ ծախում և ոչ գնում են: Դրա համար էլ իմաստուն կոյսերը մերժում են անհոգների խնդիրը և մատնացոյց անում վաճառական երին: Վաճառականները նման են հոգեսոր հայրերին, բարեպաշտ քարողիչներին, որոց պիտի գիմէին անհոգներն իրանց վերջին ժամին՝ օգնութիւն և մխիթարութիւն ընդունելու նրանցից: Այն ժամանակ՝ երբ անհոգները վերջին բոսէին աղօժքով և ապաշխարութեամբ էին պարապած, այն ինչ որ իրանց կեանքի ընթացքում մոռացութեան էին տուել, փեսան գալիօ է. պատրաստների հետ մտնում է երկնքի արքայութիւնը և դուռը կողպում է: Յիմար կոյսերը, որոնք իրանց կեանքի ընթացքում բաւական ժամանակ ունէին պատրաստուելու, ուշացան: Յաջող ժամանակը կորցրին, իսկ այս կորցրածն այլ ևս ոչնչով չի կարելի յետ ստանալ: Պատրաստները փեսալի հետ վայելում են երկի. արքայութեան մէջ իրանց վարած կեանքի պտուղը: Իսկ յիմարները կէս գլշերին դրում յուսահատութեան մէջ են: Կոքա՞ որոնք իրանց կեանքի ընթացքում ապաշխարութեան և շնորհաց ժամանակը անհոգութեան են տուել, թո՞ղ երեք չուսան, թէ ներողութեան կարժանանան—այդպիսիք կլսեն փեսալից միայն «ոչ ճանաչեմ զձեզ»ը: Գլխաւոր մտքերը համառօտ կերպով համախմբել:

III

Կատարեալ և անհոգ քրիստոնեաների վարմունքը համեմա-

տել միմեանց հետ՝ Տիրոջ գալստեան առթիւ: Առաջինները զգոյշ են, հսկում են իրանց սիրտը, իսկ վերջինները՝ անհոգ: Այդ երկու տեսակ անձնաւորութիւններն ինչպէս են վարւում կեանքի մէջ, զորօրինակ փորձութեան (աղքատութեան, հարստութեան, հւանգութեան... ժամանակ): Ի՞նչպէս են վարւում բարի գործերի ժամանակ: Մահուան ժամանակ ինչպիսի մտածողութիւն են ունենում (նկարագրել մահուան րոպէում մարդոց մտածողութիւնները): Ի՞նչը պէտք է ստիպէ քրիստոնէին զգոյշ և ինչն տնհոգ լինել:— Երջանիկ և ապերջանիկ վախճան ունենալը: Էլի ինչը: Կեանքը վարժութեան դպրոց է: Ինչ բարի գործ, որ մարդու իւր անհոգութեամբ մոռանում է, այլ ևս յետ ստանալ չի կարող: Այս կեանքը շնորհաց շրջանէ, որ տուել է մեզ Աստուած յաւիտենական կեանքի համար պատրաստուելու, իսկ նրանից օգտուելը շատ դիւրացրեց իւր միածին որդու ձեռքով: Ով սրանից օդուտ չի քաղիլ, կնշանակէ արհամարհում է Աստուծու շնորհը: Ով խօսքով և գործով չէ յարգել Յիսուսին, որին նա շատ լաւ ճանաչում է, արժանի է որ Յիսուսն էլ նրան չճանաչէ մի օր: Ով ճաշակել է Յիսուսի ցոյց տուած ուղիով ստացած ներքին բաւականութիւնը, այդպիսին ուրիշ ոչ մի բաւականութիւն չի փնտուիլ՝ բացի այն, որ շարունակ նրան նայէ և ընդ միշտ նրա հետ կենակցել կարողանալ:

IV

«Երանի մեռելոց, որք ի տէր ննջեցին»:

«Լեր հաւատարիմ մինչեւ ի մահ եւ տաց քեզ զպսակն կենաց»:

V

Ե՞րբ գուք ևս կնմանուիք իմաստուն և յիմար կոյսերին: Ի՞նչպէս կարող էք այժմ և յետոյ զգոյշ լինել, հսկել ձեր ներքինը: Հարազատ քրիստոնէին համեմատեցէք պահապան զինուորի հետ: Յապաղելը քրիստոնէի համար միշտ վտանդաւոր է: Սուրբ զքիլ մէջ լիշուած «իմաստուն» և «յիմար» խօսքերն ինչպէս պիտի հասկանալ: Սերմանացանի, որոմի, մեծ ընթքի և քանքարների առակներն ինչպէս են յարաբերում այս առակի հետ: Մեր առակը և՛ մխիթարութիւն և՛ սպառնալիք է:

Մ ե կ ն ե լ և վ ա ր ժ ե լ—II. թմթ. Բ. 19»: Այլ հաստատուն հիմն Աստուծոյ կայ եւ ունի զկնիքս զայս, թէ ծա-

նեաւ տէր զայնոսիկ՝ որ իւրն են»։ Թ. ա. գդ. Զ. 9։ «Այլ զբարիս գործել մի ձանձրասցուք, զի՞ ՚ի ժամանակի իւրում հնձեսցուք առանց լքանելոյ»։

Սաղմոս դա. 13. «Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին, որպէս մայրքն Լիբանանու բազում եղիցին»։ Ղուկ. ժբ. 35—40 «Եղիցին գոտիք ձեր պնդեալ ընդ մէջս, եւ ճրագունք լուցեալք...»։ Թ. ա. եբր. դ. 1. «Երկիցուք այսուհետև, զուցէ ի թողուլ զաւետիսն՝ ՚ի մտանելոյ ՚ի հանգիստ նորա, գտանիցի ոք ի ձէնջ նուազեալ»։ Մտթ. Զ. 24. «Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել. կամ զմինն ատիցէ եւ զմիւսն սիրիցէ. կամ զմինն. . . ոչ ոք կարէ ծառայել Աստուծոյ եւ մամոնայի»։ Սիրաք ժա. 22. «Մի խափանիր հատուցանել զուխտուի դէպ ժամանակի եւ մի կալ մնալ մինչեւ ՚ի մահ արդարանալ»։ Թ. ա. գդ. Ե. 6. «Զի ՚ի Քրիստոս Յիսուս, ոչ թլպատութիւն ինչ կարող է, եւ ոչ անթլպատութիւն. այլ հաւատք՝ սիրով աշջողեալք»։ Թ. ա. փիլ. բ. 12. «Այսուհետև, սիրելիք իմ, որպէս յամենայնի հնազանդեցարուք, միմիայն ՚ի գալստեան իմում, այլ առաւել ևս այժմ՝ յորժամ հեռի եմ ՚ի ձէնջ, ահիւ եւ գողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք»։ Ամէն բանի վերջն է գովելի։

Վարժութիւն. — «Որ ոք գիտից է զբարին...»։ «Զի զոր ինչ սերմանէ մարդ...»։ «Եւ զորօրինակ կայ մնայ...»։ «Մի սիրէք զաշխարհս եւ մի ինչ...»։ «Բայց եթէ ինչ ՚ի Քրիստոս...»։

§ 42.

ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Նպատակ: Վերնագիր:

I

Յիշել տալ սաներին, թէ ինչպիսի դատաստաններ է լորել Աստուած հին ուխտի պատմութեան մէջ՝ ջրհեղեղից սկսած մինչև Երուսաղէմի կործանումն, այլև ներկայումս։ Յիշել նոյնպէս, թէ որպիսի վճիռներ է կարդացել Յիսուս մատնաւոր մարդոց կամ որևէ է դասակարգի վերաբերութեամբ (հարուստ երիտասարդ, փարիսեցի և մաքսաւոր)։ Արդեօք Քրիստոս որ՛ւիցէ վճիռ կարդացել է այն մարդկանց մասին, որոնք իւր ժամա-

նակում չէին ապրում, զորօրինակ մեր մասին։ Ի նկատի առնելով նպատակը՝ վիշել հետևեալ կէտերը — Քրիստոսը իւր առակների և քարոզների մէջ մեր մասին ևս վճիռներ է կարդացել։ Առակների մէջ եղած անձանց օրինակներով մեզ պարսաւում և զովում է, պատժում և վարձատրում է։ Այսպէս Աստուած և Քրիստոսը պարսաւանքի և գովասանքի, պատժի և վարձատրութեան, երջանկութեան և գժբաղտութեան օրինակներով մեզ զբաւում են զէպի իրենց։ Նրանք կորցնում են մեզ, նրանք որոնում են մեզ, նրանք գտնում են մեզ (ապաշխարութիւն և շնորհ)։ Արդեօք այս կրցնելը և որոնելը, բաժանուելը և վերադառնալը, ապաշխարութիւնն ու շնորհը, ներումն ու պատիքը պէտք է յաւիտեան տևեն, թէ մի օր պէտք է դադարի և վախճան ունենայ։ Այս, մի օր (տ. վերջին առակ) պէտք է դադարի և վերջ ունենայ — կզայ մի վախճանական վճռահատութիւն, որ այլ ևս չի փոփոխուի։ Ահա այն վախճանական որոշման վերջին դատաստանի մասին է խօսում Քրիստոս։

II

Աւանդել նոր նիւթը — Մտթ. իէ. 3—46. բացարել։ Ե՞րբ պէտք է լինի վերջին դատաստանը։ — Ժամանակամիջոցն անորոշ է («Երբ մարդոյ որդին իւր փառքով կդայ»). բայց այսքանը որոշ է, որ լինելու է։ Ճատ հաւանական է՝ այն ժամանակ տեղի ունենայ, երբ երկրագնդիս բոլոր ազգերին Աստուծու աւետարանը կքարոզուի, երբ Աստուած իրանից հեռացածներին վերստին իւր մօտ կկանչէ և կամ նրանք՝ որոնք թէ իրան և թէ իւր միածին որդուն չեն ճանաչել, կխոստովանեն և ինորոյ կընդունեն։ Աստուծու սէրն այնքան ժամանակ կտևէ՝ մինչեւ ամէնքն էլ որդիք Աստուծոյ կդառնան (նոյն իսկ չար ծառան, լիմար կոյսերը, հարուստ մեծատունը, որոնք այստեղ ուշացան երկնից արք. մտնելու)։ Սյնուհետև առանց բացառութեան վերջին դատաստանը տեղի կունենայ։ Դատաւորը Քրիստոս ինքն է։ Նա արդար դատաւոր է, որովհետև որպէս որդի Աստուծոյ մեզ օրէնքներ տուաւ, գործով կատարեց և պատուիրեց, որ մենք էլ նոյն օրէնքների համաձայն կեանք վարենք. որովհետև որպէս որդի Աստուծոյ մեր մարդկային սիրտը

և տկարութիւնը շատ լաւ ճանաչում է, ուստի և ներող, արդարագատ կլինի: Յիսուսը մարդոց երկու խմբի կբաժանէ—բարի և չար, այնպէս, ինչպէս հովիւը բաժանում է ոչխարներն այծերից—առաջիններին յաւիտենական երջանկութիւն կիսուտանայ, իսկ վերջիններին յաւիտենական տանջանքի կմատնէ:

Մարդիկ ի՞նչ պատճառով այսպիսի տարբեր վիճակների են արժանացել:— Պեռ ոչ ոք իրօք չէ արժանացել յաւիտենական երջանկութեան (տ. § 14.). դա մի տեսակ շնորհ է, որ Աստուած տալիս է մարդոց և ոչ թէ իրանց աշխատանքի վարձն է: Իսկ այն անձինքը, որոնք չար են և այդպիս էլ անուղղայ մնում են իրանց չարութեան մէջ, չեն արժանանում Աստուծուշնորհին՝ հակառակ նրա անհուն սիրուն:

Ի՞նչով պիտի Քրիստոսն այս երկու տեսակ մարդկանց ճանաչէ:—Առաջին դասակարգի մարդիկը նրանք են, որոնք ամենայն տեսակ բարի բաներ գործել են (թանձրացեալ օրինակներ). այս բարի գործերի ազբելուն է սէր առ մերձաւորս, որը բղիսում է այն հանգամանքից, երբ մենք սրտով անձնատուր ենք լինում Քրիստոսին և նրա հօրը: Այս բարի գործքերի զարդարանքը համեստութիւնն ու հեղութիւնն է: Գործող անձանց յատկանիշ կողմը համեմտութիւնն է. նրանք մեզ այնպէս են ձեւանում, կարծես թէ ոչինչ չեն գործել, չնայելով որ ոչ մի բարի գործ չեն մոռացել գործելու: Այս տեսակ մարդիկը մտածում են միայն նրա վրայ, թէ ինչպէս օգնեն և ծառայեն մարդոց. այդպիսիք իրանց անձը մոռանում են, նրանք ամենայետիւններին անդամ իրանց եղբայր են ընդունում (օրինակներ): Ահա այս տեսակ մարդկանցն է ընդունում Քրիստոսն որպէս իւր հաւատարիմ աշակերտներ, որպէս ժառանգորդներ երկնքի արքայութեան:

Իսկ նրանք, որոնք առանց կարեկցութեան անդնում, գնում են օգնութեան կարօտ ընկերի մօտովը. որոնք սէր և հաւատ չունին, ծանր կերպով մեղանչում են Աստուծու դէմ, Աստուծու, որն ամենի վրայ սիրոյ հեղեղ է թափել: Այդպիսիք իրանց սրտով, գործով և մտածողութեան եղանակով արհամարհել են նրա պատուիրանը: Այդպիսիները լի մեծամտութեամբ և անձնագործութեամբ կարծում են, թէ ամեն ինչ կատարել են և եթէ նրանք Քրիստոսին «տէր» են անուանում, իսկապէս

ոչ թէ նա կամ նրա սէրը, այլ իրանց սեպհական օգուտը, անձնական վայելքն է իրանց սրտի թագաւորը եղել: Դրա համար էլ այդպիսիները չեն կարող երկ. արք. ժառանգորդ լինել. այդպիսիք իրանց ձեռքով (սիրուց զուրկ լինելով) վակում են երջանկութեան դռները և դատապարտութեան մատնում իրանց: Թէ ինչը մէջն է կայանում մինի երջանկութիւնը և միւսի ապերջանկութիւնը, յատնի չէ այստեղ ևս (§ 40.), որովհետեւ Քրիստոս ժողովրդի հետ օրինակներով է խօսում: Անշուշտ մինի համար պիտի պատրաստուած լինի ամեն տեսակ երջանկութիւն, իսկ միւսի համար՝ դառն տանջանք: Համար մը ը ել դլուաւոր կետերը:

III.

Առակնելի մէջ արդէն քանից խօսք եղաւ մի այսպիսի— ապաղաւի բաժանումն բարւոյ և չարի— (§. 21. 32. 38. 41.) մասին: Աստուծածալին իմաստութիւնը երկրիս վրայ հազիւ թէ մի այսպիսի բաժանումն անէ, ինչպիսին մենք տեսանք որոմի առակի մէջ: Կոյն իսկ միւս առակների մէջ եղած բաժանումն առժամանակեալ էր, որ տեղի ունեցաւ աստուծածալին շնորհիւ և ապաշխարութեամբ—միայն վերջին դատաստանի օրը պիտի վերջնական բաժանումն տեղի ունենայ: Բոլոր առակների մէջ լիշուած աստուծածալին որոշումները լինում են ոչ թէ, ինչպէս մարդիկ են անում, ինկատի առնելով հարստութիւնը, կոչումն, կրթութիւնը... այլ նայելով թէ մարդս ինչ համոզում, ինչպիսի մտածողութեան եղանակ ունի, որովհետեւ համոզման, մտածողութեան եղանակի ուժը, զօրութիւնը չէ կայանում գեղեցիկ խօսքերի կամ զգացման մէջ, այլ բարի կամքի և իրական գործի, ուստի և անկեղծ համոզման միակ արտաքին նշանը գործն է:

Սրա համար ևս երկնքի արքայութեան ժառանգորդները չեն համարւում նրանք, որոնք իրանց շրթունքներով Աստուծուն և Քրիստոսին իրանց տէրն են համարում, այլ նրանք, որոնք Աստուծու և Քրիստոսի ներգործութիւնը իրանց սրտի վրայ գործնականա պէս ցոյց են տալիս. այդպիսիներն ապացուցանում են որ Քրիստոսի միջնորդութեամբ Աստուծու յայտնած կամքը միշտ սիրով, եռանգով և հաւատարմութեամբ են կատարել:

IV

Մտթ. է. 21. «Ոչ ամենայն որ ասէ ցիս, տէր տէր. մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս հօր իմոյ որ յերկինս է»: Կրկնել—«Սիրեսցես զտէր Աստուած քո...»: Յովհ. ժդ. 35. «Յայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրէք զմիմեանս»: Թ. ա. դդ. Ե. 6. «Զի ՚ի Քրիստոս Յիսուս ոչ թլպատութիւն ինչ կարող է եւ ոչ անթլպատութիւն. այլ հաւատք սիրով աջողեալք»: II թ. ա. կրնթ. Ե. 10. «Բանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով՝ զոր ինչ զործեաց յառաջ՝ եթէ բարի եւ եթէ չար»:

V

Ի՞նչպէս պէտք է ցոյց տանք, որ մենք էլ Քրիստոսի Հարազատ աշակերտներն ենք: Ե՞րբ մենք ևս կպատկանենք այն խմբին, որոնք կոչում են. «Տէր, Տէր»:

Քրիստոսի խօսքերը վերջին դատաստանի մասին ի՞նչ յարեքերութիւն ունեն սերմանացանի, փարիսեցու և մաքսաւորի ու ողորմած սամարացու առակների հետ:

Մ ե կ ն ե լ—Մտթ. է. 7—20. «Գոյշ լերուք ի սուտ...» Մտթ. ժը. 46—50. «Մինչդեռ նա ընդ ժողովուրդոն. . .»: I. Թ. Յովհ. Բ. 4—6. «Որ ասիցէ եթէ ծանեալ. . .»: Պ. 10. 18. «Ելսուիկ յալտնի են...»: Ե. 2. 5. «Այսուիկ ճանաչեմք...»:

Վ ա ր ժ ե լ—«Երանի աղքատաց...»: «Գոր ինչ սերմանէ...»: «Եւ զոր օրինակ կայ մնայ միանգամ...»: «Երանի այնոցիկ, որ լսեն զբանն Աստուծոյ...»: «Մաբդ հայի յերեսս...»: «Որ ոք գիտիցէ զբարին եւ ոչ առնէ, մեղք են նմա»:

§ 43

Լ Ե Ր Ա Ն Փ Ա Ր Ո Ջ Լ

Ա զ դ: Լերան քարոզն աւետարանի այն մասն է, որով Յիսուս աշխարհին յայտնում է իւր վարդապետութիւնը: Նա հարուստ է բարոյական—կրօնական մտքերով, որոնք արտայայտուած են ոչ որպէս պատմութիւններ կամ առակներ, այլ՝ որպէս իմաստներ, մեր IV. աստիճանի նիւթեր: Եթէ առակների մէջ Յիսուսը յայտնում է իւր վարդապետութեան այս

և այն կողմը, այստեղ լրիւ վարդապետում է իւր ուսման հիմունքները: Երբ լերան քարոզի նիւթը իմաստների ձևով է արտայալուած, ասել է թէ լոկ վերացական մտքեր են, հետևապէս և նա ընդունակ չէ ձևական հինգ աստիճաններով մշակուելու: Որքան որ այս հանգամանքը դժուարութիւններ է մատակարարում ձևի կողմից, այնքան ևս դիւրութիւն ունի ներքին կողմից: Ճատ նորութիւններ չենք հաղորդելու աշակերտներին այս նիւթով, վասնզի առակների և առ հասարականցեալ պատմութիւնների մէջ մեծաւ մասամբ նիւթիս վերացական մտքերը հաղորդել ենք սաներին, այստեղ մնում է նիւթը կարդալ որպէս իմաստներ (IV. աստիճանի նիւթ) և պահանջել, որ սաներն իրանք թանձրացեալ օրինակներով մեկնեն: Թանձրացեալը կարելի է կամ Սուրբ զրքի ուսած պատմութիւններից և կամ աշակերտների ծանօթ շրջանից վեր առնել:

Փ լ խ ա ւ ո ր ն պ ա տ ա կ: Մենք այսօր պէտք է կարդանք լերան քարոզը:

Ի՞նչու համար այդպիսի անուն ենք տալիս: — Որովհետև լերան վրայից է խօսում: Սրդէն ծանօթ է ձեզ լերան քարոզի մի քանի մասները, զորօրինակ այնտեղ՝ ուր Յիսուս խօսում է ողորմածութեան, խաղաղասիրութեան, հաշտութեան, թշնամուն սիրելու, երկլալին և երկնալին բարիքների, մարդկանց հոգացողութեան, ուրիշների վերաբերութեամբ վճիռ կարդալու... մասին: Լերան քարոզից մի հրաշալի աղօթք (հայր մեր) յայտնի է ձեզ և ամենքդ էլ գրեթէ անդիր գիտէք: Սաները պիտի յիշեն ամեն մի մտքին վերաբերեալ իմաստներ և պատմութիւններ, զորօրինակ խաղաղասիրութեան վերաբերեալ—«Երանի խաղաղասիրաց...»: թշնամուն սիրելու վերաբերեալ—«Սիրեցէք զթշնամիս ձեր...»:

Ա Թ Ա Ֆ Ի Խ Ա Տ Ա Խ Ա Ծ.

Պատթէսս Ե. 1—9.

Ե ր կ ր ո ր դ ա կ ա ն ն պ ա տ ա կ: Մենք այսօր պէտք է լերան քարոզից մի կտոր կարդանք, որով Յիսուս իւր ունկնդիրներին զանազան երանութիւններ է տալիս:

Ի՞նչ է նշանակում «երանութիւն» տալ: Յիսուս ասում է — ով այսպիսի համոզումն ունի, նա այստեղ էլ, այնտեղ էլ

Երանելի՝ բաղկաւոր կլինի։ Մեզ յայտնի են մի քանի համոզումներ, որոնցով Յիսուս մարդոց երանութիւն է կարդում։ Սաները պիտի լիշեն բացի իրանց ծանօթ Մտթ. Ե. 4. 5. 6. 7. 8. 9.-ից այլև «Երանի այնոցիկ, որք ոչ տեսանեն, բայց...»։ «Երանի քեզ Սիմոն, որդի Յովնանու...» (Հաւատ)։ «Երանի այնոցիկ, որք լսեն զբանն...» (Հնագանդութիւն)։ «Երանի մեռելոց, որք ի տէր ննջեցին...» (Հաւատարմութիւն ցմահ)։ Այսպէս ուրեմն շատ տեսակ համոզումներ կան, որոնք դէպի երանութիւն են առաջնորդում, բայց լերան քարոզի մէջ Յիսուս իննը երանութիւն է զրուատում։

Փարիսեցու և մաքսաւորի առակի մէջ տեսանք արդէն, թէ ինչպիսի երանութիւն կարդաց։ Այդ երկու անձնաւորութեանց որին վարմունքը գուր եկաւ Քրիստոսին։ Դուք որին էք հաւանում։ Երկու տեղերը միմեանց հետ համեմատելուց յետոյ՝ կստանանք, որ երկուն էլ աղքատ են բարեդործութիւններով, անմեղութեամբ և բարեպաշտութեամբ (այսինքն «Հոգեկան» իրեր), բայց միայն մաքսաւորն է զգում այդ աղքատութիւնը, այն ինչ մեծամիտ փարիսեցին իրան ամենից հարուստ է համարում հոգեկան իրերով։ Միայն մաքսաւորին է ճնշում հոգեկան աղքատութիւնը, որտեղից էլ յառաջանում է ցաւ, վիշտ, զղջումն, հաւատ։ Որովհետև նա ճանաչում է «Հոգեկան աղքատութիւնը»։ զգում է որ ինքը հոգեպէս աղքատ է, դրա համար էլ հէնց այդ զգալը տանում է նրան դէպի հոգեկան հարստութիւն և երանութիւն։ իսկ փարիսեցին զուրկ լինելով այս զգացողութիւնից, խարխափում է մեղաց մէջ և հեռու է մնում Աստուածանից։

Կարդալ նիւթը, մեկնել և տպաւորել առաջին երանութիւնը։ Վարժեօք ծանօթ են ձեզ հոգեպէս աղքատներ։ Ի՞նչպէս կապացուցանէք, որ դուք հոգեպէս աղքատ էք։

Միւս երանութիւնները թէ հեշտ են և թէ սաներին յայտնի, ուստի և նրանց օդնութեամբ կարելի է մեկնել և յայտնի նիւթերի մէջ որոնել լիշեալ իմաստները։

Հետևեալ նիւթերը թէւ այս գլխի մէջ չեն լիշատակում, բայց որպէս աստուածաշնչական կէտեր, ընտիր բացատրութիւններ կարող են համարուել, զորորինսկ առաջին երանութեան

համար—անառակ որդին և իւր եղբայրը, Սիմօն Պետրոս, Զակքէոս, Յովհաննէս մկրտչի ունկնդիրները, հարուստ երիտասարդը, քանանացի կինը, այգու մշակները։ Երկրորդ երանութեան համար—Յովի և աղքատ Ղաղարոս, որոնք արդարացի կերպով իրանց անբաղդութեան վշտերը կրում են. Յակովը և Յովսէփի եղբայրները, իսրայէլի ժողովուրդը զանազան ժամանակներում։ Քայիթ, մաքսաւորը և անառակ որդին (առակ), որոնք աստուածանից ուղարկած վշտերը կրում են իրանց յանցանքի համար և որանով ճանապարհ են հարթում դէպի երանութիւն։ Երրորդի համար—Նրանք՝ որոնք հեղութեամբ, առանց տրտունջի են ընդունում Աստուածանից ուղարկուածները—Յովի երանելի, Եղիա, Սբրահամ, Յիսուս Քրիստոս՝ որպէս մարդ։ Հեղութիւնը Թաւթի մօտ յաղթում է թշնամուն։ իսկ Յիսուս նոյնով նուածում է ամբողջ երկիրս, որ ոչ մի երկրային ոյժով չէր կարող ձեռք ըերել։ Ներկայում ևս անզէն հեղութիւնը ամենից հեշտ կերպով սանձահարում է հակառակորդի բարկութիւնն ու կատաղութիւնը։ Զորդ որդի համար—Մովսէս, Սամուէլ, Թաւիթ, Սողոմոն, Յովհաննէս Մկրտիչ, մաքսաւոր, անառակ որդին, Զակքէոս, Յիսուսի աշակերտները։ Հինգեր որդի համար—Նրանք, որոնք գործով գթասիրտ են դէպի կարիք ունեցողները (Սբրահամ, Հովութ, Սամարացին...) դէպի ծանրաբեռնեալները, ըեռնաւորները (Յովսէփի, Եսաւ, Մովսէս, Թաւիթ, չար ծառալի առակի թագաւորը.) իսկ ամենից գեղեցիկը, որ բաղմաթիւ օրինակներով ցոյց տուաւ, Քրիստոս ինքն է։ Վեցեր որդի համար—աւելի կամ պակաս մաքուր սրտով ներկայանում են մեղ—Սբրահամ, Յակովը, Մովսէս, Թաւիթ, Սողոմոն, Յովհաննէս Մկրտիչ, Զակքէոս, Յիսուսի աշակերտները։ Սրանք նրանով երանելի են, որ մաքսաւ սիրտ ունին և որանով էլ նայել, տեսել են Աստուծուն։ Այս նայելը (զգալը) դէպի Աստուած՝ մարդուս ամենամեծ բաղդաւորութիւնն է։ Եօթներ որդի համար—Սբրահամը խաղաղասէր եղաւ դէպի Յահովի, Յովսէփի, դէպի իւր եղբայրները։ Թաւիթը՝ դէպի Սաւուզ և Միմէի, Քրիստոս դէպի բոլոր մարդիկ, որոնք նրան ոչինչ հանգստութիւն, խաղաղութիւն չտուին։ Բարի քրիստոնեաները միայն կարող են խաղաղասէր և խաղաղութեան հիմնող լինել, դրա համար էլ խաղաղութիւն է տիրապետում այդպիսեաց սրտե-

բում և այդպիսիք որդիք Աստուծոյ են կուռում (օրինակ):
Խ ն դ ի ր ն ե ր բոլոր երանութիւնների համար—ինչպիսի
յորդոր կայ ամեն մի երանութեան մէջ և ինչպէս կարող ես
դու կատարել: Ինն երանութիւնները ինն թէ մի ճա-
ճանապարհով են դիմում դէպի երանութիւն: Դրանք նման են
ծիածանի եօթը գոյնին, որոնք արեգակի լուսոյ զանազան գոյ-
ներն են ցոյց տալիս: Անունով քրիստոնեայ և սիրուց զուրկի
մարդկանց սրտերումը ճշմարիտ երանութեան փոխարէն ինչպիսի
երանութիւններ կան: Լերան քարոզի առաջին հատուածը հա-
մեմատեցէք Մովսէսի օրէնստուութեան և ժողովրդից հրաժա-
րական (անէջք-օրէնութիւն, պատիթ և շնորհ, երկլւղ-սէր,
երանութիւն-դատապարտութիւն) առնելու հետ:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ.

Պատթէոս Ե. 17—48 (ընտրութեամբ):

Ն պ ա տ ա կ: Յիսուս, փարիսեցիները և դպիրներն ինչ-
պէս կվերաբերուին դէպի Մովսէսի օրէնքները: Արդեօք նրանք
էլ կընդունէին և կլատարէին թէ ոչ: Բայց ինչպէս: Ի՞նչպէս
կլատարէր Յիսուս (օրինակներ նրա աստուածալին և մարդկալին
սիրոյ). Ինչպէս են կատարում օրէնքը փարիսեցիները և դպիր-
ները: Արդէն մի տեղ Յիսուսի աշակերտները խօսակցութիւն
ունեցան փարիսեցիների հետ—սրանք աւելի ուշադրութիւն էին
դարձնում օրէնքի արտաքնի վրայ. բացի դրանց օրէնքի վրայ
զանազան յաւելուածներ էին ընդունում և այդ յաւելուածները
նոյնքան կարեւոր էին համարում, ինչքան և օրէնքը: Յիսուս
ինչպիսի վճիռ կլարդայ փարիսեցիների օրէնքը կատարելու
վերաբերութեամբ:

Կ ա ր դ ա լ հ ա տ ու ա ծ ք՝ մասների բաժանելով:

1, Պատթ. Ե. 21—22. մինչև «պարտապան լինի ՚ի գեհեն հրոյն»:

Վ ե ց ե ր ո ր դ պատուիրանի վերաբերութեամբ ինչ կմտա-
ծէ Յիսուս: Իսկ փարիսեցիները: Սպանութիւնը ոչ թէ մահու-
հարուած պիտի հասկանալ, ինչպէս փարիսեցիներն էին ընդու-
նում, այլ ամեն մի նախանձ, ատելութիւն, բարկութիւն, որից
մարդասպանութեան մտքեր են ծնում, մեղանչումն է օրէնքի
դէմ: Այս միենոյն մտածողութիւններից ծնան կայէնի, դաւ-
թի, Աքաարի, չերովդիսի, Յօվսէփի եղբայրների, Սաւուղի մար-

դասպանութիւնները... Յօվսէփի եղբայրները և Սրիսողոմն
իրանց վարմունքներով համարեա թէ սպանեցին իրանց հօրը:
Փարիսեցիները և բոլոր մարդիկը մեղանչել են Յ. պատուիրանի
դէմ, որովհետեւ ամենքն էլ իրանց մէջ նախանձի, ինքնասի-
րութեան, ատելութեան և բարկութեան մտածողութիւններ են
ունեցել: Ով իւր մերձաւորին այնպէս է սիրում, ինչպէս իրան
այնպիսին միայն կատարել է օրէնքը Յիսուսի պատուիրանի
համաձայն:

2, Պատթէոս Ե. 33—37.

Ե ր դ մ ա ն մասին ինչ հայեացք ունի Յիսուս: Յիշել երդ-
ման և սուտ երդման օրինակներ, զորօրինակ Եղիազար, Դա-
ւիթ և Յօվնաթան, Սաւուղ, Հերովդէս: Ի՞նչ զանազանու-
թիւն կայ սովորական խօսակցութեան և երդման մէջ: Ի՞նչից
ստիպուած մարդիկ երդումն են ուտում: Ի՞նչ հանգամանքնե-
րում և ինչու ցօրս երդուած են: Ի՞նչ դիպուածներում երդումն
աւելի ևս արգելուած պիտի համարուի: (Չնչին բաների հա-
մար—փարիսեցիներն ամեն մի չնչին բանի համար Աստուծու
անունով էին երդուած): Դատաստանի առաջ արդեօք երդումն
հարկաւոր է:—Այս: Այդ ինչպէս է, որ Քիստոս բոլոր տեսակ
երդումներն արգելում է:—Եթէ մարդիկ այնպէս վարուէին ինչ-
պէս Քիստոս, այն ժամանակ երդումն աւելորդ կլինէր: Եթէ
մենք երդման կարիք ենք ունենում և յամակ ստիպուած ենք
ստախօսութեան դիմել, այդ նշանակում է, որ ճշմարտութիւնը
թոյլ է և ստախօսութիւնից յաղթուած է, ուրեմն և երկ. արք.
հեռու է մեղնից: («Զար բիծ ի մարդ ստութիւն»):

3. Պատթէոս Ե. 38—40.

Թէ Յիսուս ինչ հայեացք ունի վրէժինդրութեան և հա-
տուցման մասին, այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է (իմաստ-
ներ): Զարութեանը չարութիւնով հատուցանելլ միշտ անիրա-
ւացի է. չարութիւնը պէտք է բարութիւնով յաղթել (Դաւիթ
և Սաւուղ): Փարիսեցիներն այսպէս էին մտածում—ինչոր դու
ինձ կանես, ես էլ նոյնը քեզ կանեմ: Միթէ ոչ մի տեղ հա-
տուցում չպիտի անել: Դատաստանը չար մարդկանց պատօւմ
է, այսինքն նրանց արած վատութեանը վատութիւնով (արտաքին
կերպով մտածելով) է հատուցանում: Եթէ այդպէս չպարուի
դատաստանը, այն ժամանակ վատ մարդկանց թիւը կաւելանաւ

և չարութիւնը յաղթող կհանդիսանալ ընդգէմ բարութեան (թանձրացեալ օրինակներ): Արդեօք Յիսուս իւր աշակերտներին խորհուրդ չէր տայ չարին հակառակ չզնալու: — Փարիսեցիները սիրում էին «ակն ընդ ական»ը, որ դատաւորներին միայն իրաւունք է տուած: Սովորական յարաբերութեանց մէջ ևս նոյնն էին պահանջում և զործում փարիսեցիները, այնինչ Քրիստոսի քարոզութեան համաձայն այդ տեսակ հանդամանքներում՝ համբերութիւն, զիջողութիւն և երկայնմտութիւն պէտք է: Այն կէտը՝ թէ մի ծնոտիդ հարկանելու լինին, միւսն էլ թոյլ տուր, բառացի չպիտի հասկանալ, որովհետև ինքը ևս ալապէս է ընդունում (Յովէ. ժը. 22. 23.) նոյնպէս և այն կէտը, թէ քեզանից մէկը շարիկդ ուզելու լինի, բաճկոնդ էլ տուր՝ նոյնպէս բառացի կերպով չպիտի ընդունել, այլ փոխարերական (Պուկաս գ. 11.): Իսկապէս այս է միտքը—եթէ մինը քեզ վատութիւն է արել կամ ցաւ է պատճառել, դու նրա վատութեան փոխարէն աւելի բարութիւն արա, քան թէ նա կսպասէր (Աբրահամ, Յովսէփ, Գաւիթ): Բայց տարաբաղդաբար քրիստոնեաները փարիսեցիների նման են վարւում (օրինակներ):

4. Մատթէոս Ե. 43—48.

Քո թշնամուն պիտի ատես (III. Յովս. ժթ. 8): Միթէ այս տողերը սուրբ զրքի մէջն է զրած: Այս կէտը փարիսեցիներն աւելացրած կիխին, որովհետև նրանց կարծիքով սիրել պէտք էլ մերձաւորին, ընկերին և իւր ազդին միայն, ուրեմն թշնամուն պէտք է ատել: Սյսպէս նրանք սիրոյ օրէնքը յեղաշրջում էին ատելութեան՝ ընդգէմ մարդկութեան ամենամեծ մասնի: Յիսուս ինչպէս է ընդունում մերձաւորին սիրելու օրէնքը (տ. սամարացու առակը): Յիշել այնպիսի մարդկանց, որոնք վարժել են իրանց՝ թշնամուն սիրելու մէջ և ընդհակառակը (Աբրահամ, Եսուս, Յովսէփ, Սաւուդ, Գաւիթ, ամենից մեծ օրինակ տռողը՝ Յիսուս): Նրանք, որոնք վարժել են իրանց թշնամուն սիրելու՝ մերձան են նմանում երկնաւոր չօրը (տ. Աստուծու սէրը դէպի անհաւատարիմ իսրայէլի ժողովարդը—«սէր յաւիտենական սիրեցի դքեզ...»): Մերձաւորին սիրելու ինչ օրէնք ենք սովորում այստեղ:

Վերաբերութեամբ ամ բողջ հատուածի Յիսուս և փարիսեցիներն ինչպէս են հասկանում օրէնքը: Յիսուս հասկանում

է օրէնքը ներքին կերպով, իսկ նրանք՝ արտաքին, տառացի: Փարիսեցիք ընդունում են օրինականութիւնը արտաքին գործողութեամբ, իսկ Յիսուս ներքին (բարոյական) համոզմամբ: Յիսուս կատարում է օրէնքը սրտով, իսկ նրանք թիւրում, կերպարանափոխում, յեղաշրջում են օրէնքը: Ի՞նչ համեմատութիւն Յիսուսի և Յովսիսի քարոզութեանց մէջ: — Յովսէս յայտնում է հրէութեան պատղամները, իսկ Յիսուս՝ երկնից արքայութեան: Յիսուս ամենամեծ օրէնստուն է և միւնոյն ժամանակ միակ կատարողն այս օրէնքի: Յովսէս Աստուծու ծառան է, իսկ Յիսուս որդի Աստուծոյ, որ նոյնն է անում, ինչ որ հայրն Աստուած, դրա համար ևս ասում է— Յովսէսն իրաւունք է տալիս ձեզ երդուելու, իսկ ես արգելում եմ: Ի՞նչպէս է վերաբերում քրիստոնեան դէպի Յովսիսի օրէնքը: — Նա պիտի կատարէ այնպէս, ինչպէս որ Յիսուսն է կամենում և արդարեւ նա ինքը կատարեց, լրացրեց: Բայց առանց Քրիստոսի օրինակին և օգնութեան քրիստոնեան չէ կարող կատարել օրէնքը, դրա համար էլ ոչ թէ օրէնքը, այլ՝ Յիսուս և Աստուծու շնորհն ու ողորմութիւնը կտանեն նրան դէպի երկ. արքայութիւն: Յիայնակ օրէնքը կարող է դէպի կործանումն առաջնորդել (կարդալ և մեկնել ամբողջովին թ. ա. Հում. գ. 20—24 և 28:)

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ.

Մատթէոս Զ. 1—18.

Ն պ ա տ ա կ: Յիսուս ինչպիսի հայեացք ունի ողորմութիւն տալու, աղօթելու և պահելու վերաբերմամբ. ինչ է փարիսեցիների հայեացքը նոյն առթիւ (տ. § 44):

Իւրաքանչիւր կէտը բացատրելու չափ պատրաստութիւն ունին աշակերտները: Կարդալ հատուածը և մեկնել. գործ դնել գտած ճշմարտութիւնները՝ լիշելով ծանօթ խաստները: Հայր մերի մեկնութիւնն այն չափով ընդարձակել, որքան որ ներում է սաների ունեցած թանրձրացեալ ծանօթութիւնները:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

Մատթէոս Զ. 19—33.

Յիսուսի հայեացքով որն է ճշմարիտ բարիքը, դէպի որը

մարդս պիտի ձգտէ: Ո՞րն է ճշմարիտ տէրը, որին մարդիկ ծառայելու պարտաւոր են: Ո՞րն է խոկական հոգուր, որ մարդս պէտք է ունենալ: Կարդալ և մեկնել սաներին՝ մեծաւ մասամբ յայտնի նիւթը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՒՄԸ

Վատթէոս ի. 1—23.

Ի՞նչն է տանում դէպի երկնից արքութիւնը և ի՞նչը հեռացնում նրանից: Վատնանիշ լինել դէպի Յիսուսի առակները և նիւթին վերաբերեալ զանազան ժամանակներում խօսած քարոզները: Կարդալ և մեկնել բնազիրը. դործատրել ձեռք բերած մտքերը՝ համաձայն սաների մտաւոր շրջանին:

Տուն 1—5.: Կարելի բացատրել նրանով, թէ ինչպէս կարանը Յակովը ին դատում էր, Յակովը որդիքը՝ Յովսէփին, Պատիթը՝ Նաթանի լիշած մարդուն, փարիսեցին՝ մաքսաւորին, որոմի առակը: Ճատ յարմար է նոյնպէս ներկայ ժամանակի հասարակութեան դատավճիռների մեծ մասը—«մարդ հայի յերեսս...»:

Տուն 7—11: Նիւթը կարելի է մեկնել սաներին յայտնի աղօթքներով:

Տուն 12. պարզ կերպով կարող է հետևեալ հարցի վճիռը լինել—ի՞նչ բան պէտք է ես մերձաւորի համար անեմ և ի՞նչ՝ ոչ: Վարդկանց յարաբերութիւնը միմեանց հետ նոյնպիսի լաւ բացատրութիւն կարող է համարուել:

Տուն 13. 14. բացատրել նրանով, որ սմանք զանազան տեսակ ճանապարհներով են ընթանում, բայց մինն է միայն ուղիղը—Քրիստոս միայն՝ միշտ մի ճանապարհով էր ընթանում:

Սուտ մարդարէքը (տ. 15—20) փարիսեցիները և դպիրաներն են, որոնք սիրոյ և բարեպաշտութեան պատրուակի տակ (զորովինակ ողորմութիւն, աղօթք, պահեցողութիւն, տաճառ ծառայելը, տասանորդ տալը) իրանց Աստուածանից հեռում ծառայելը, տասանորդ տալը) իրանց Աստուածանից հեռում լինելը և ինքնասիրութիւնը ծածկում էին և դրա համար նրանց ընտրած ճանապարհը կորուստ էր տանում: Փարիսեցիներից առաջ ևս սուտ մարդարէներ կային (բոլոր գալթակղիչները, նոյն խոկ այսօր ամեն ուրեք առանց փնտուելու կարելի է գտնել (§ 39): Այս տեսակ սուտ մարդարէներին կարելի է

ճանաչել սչ թէ յսօսքերով (տերև, ծաղիկ) այլ գործքերով (պտուղ):

Տուն 21. տ. § 42.: Հ ա մ ա խ մ ը ե լ նոյն համոզմունքներն ու մտքերը, որոնք մարդուն տանում են դէպի արքայութիւն և որոնք հեռացնում, մերժում են:

ՎԵՅԵՐՈՐԴ ՀԱՏՈՒՄԸ

Վատթէոս ի. 23—29.

Վերջին կտորի մեկնութիւնը՝ ով իւր կեանքը Յիսուսի սկզբունքներով (ո՞րն է) է վարում, այդ նշանակում է, թէ նա իւր տունը ժայռի վրայ է շինել: Այդպիսի անձին ոչ նեղութիւնը, ոչ կարիքը և ոչ փորձութիւնը կարող են ի կորուստ մատնել: Դրա հակառակ՝ ով իւր կեանքը իւր սեպհական ցանկութեանցն է ստորագրում, բազմաթիւ նեղութեանց և փորձութեանց միջոցով անդունդ է զլորվում:

Խ ն դ ի ր ն ե ր ա մ ը ո զ ջ լ ե ր ա ս ն ք ա ր ո զ ի հ ա մ ա ր: — Լերան քարոզի նիւթը դասաւորեցէք. լերան քարոզը համեմատեցէք Սինալի օրէնստուութեան հետ. ¹⁾: Քրիստոնեան ի՞նչպէս պիտի իւր կեանքը ըստ լերան քարոզի վարէ:

Փրկչի վարդապետութեան զլիաւոր հիմունքները ո՞րոնք են: Այս երկու իմաստները կարող են որպէս համախմբումն ծառայել—Թ. ա. Փիլ. Բ. 5. «Զայն խորհեցի իւրաքանչիւր ոքի ձէնջ, որ եւ ի Քրիստոս Յիսուս»: Յովհ. Ժդ. 6. «Ասէ ցնա Յիսուս, ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք, ոչ ոք գայ առ Հայո՛ եթէ ոչ ինեւ»:

§ 44.

**ՅԻՍՈՒՄԻ ԽՕՍՍԿՅՈՒԹԻՒՆԸ ԼՈՒՍՑՄԱՆ, ԿԵՐԱԿՐԻ, ՊԱՀՔԻ
ԵՒ ՃԱԲԱԹԸ ՍՐԲԵԼՈՒՄԱՍԻՒՆ:**

Ն պ ա տ ա կ: Այսօր մենք պէտք է սովորենք, թէ Յիսուսն ի՞նչպիսի հայեցակէտ ունի հրէից բոլոր սրբազն արարողութեանց մասին:

¹⁾) Կարդալ—Խ ր ի մ ե ա ն—Յիսուսի վերջին ընթրիքը:

I

Ի՞նչպիսի սրբազան արարողութիւններ ենք սովորել ցարդ: Յիշել—լուացումն, պահեցողութիւնն, մի քանի անսուրբ համարուած կենդանիների միտ չուտելը, գոհ, տաճարին ծառայել, հանգիստ շաբաթ օրում, ոռվորութիւններ աղօթելիս (ձեռքերը վերև կառկապել կամ կրծքի վրայ դնել, կանգնել կամ ծունդ դնել...): Ի՞նչ կմտածէր Յիսուս այդ բոլորի մասին: Արդեօք կը յարդէր այդ արարողութիւնները, ինչպէս որ յարդում էր աղօթելը, բարի մտածողութիւնը և մերձաւորի սէրը: Արդեօք գրանց կատարումն անհրաժեշտ կհամարէր երանելի դառնալու համար: — Հարցերի միջոցով ձեռք բերած տեղեկութիւններից այս քանը պիտի հետեւցնել—սրբազան արարողութիւններն այնքան կարեսոր չեն՝ որքան սուրբ մտածողութիւնները և սրբակեաց կենցաղավարութիւնը: Անշուշտ Յիսուսն ևս ալսպէս կընդունէր:

II

ԱԹԱՁԻՆ ՀԱՏՈՒՄԾ

Լուացումն և կերակուր:
Աւանդել նոր նիւթը— Պատթ. ժե. 1—20. Պուկ.
ժա. 37—54:

1. Փարիսեցիները և գալիրները դանդատում են Յիսուսին, որ նրա աշակերտները՝ դարաւոր սրբութեամբ յարդուած ծերերի աւանդութիւնցն անցնում են: Պավէսի օրէնքում զըրտուած է, եթէ մինը հիւանդին կամ նրա շորերը շօշափելիս հիւանդացել է, որ լուացուի, կսրբուի: Որպէսզի մարդ անզիտութեամբ չպղծուի՝ չհիւանդանայ, դպիրները բազմաթիւ լուացման կանոններ սահմանեցին, որոնք օրուայ ընթացքում պիտի կատարուէին, զորօրինակ հացից առաջ և յետոյ: Այս կանոնները երբեմն տասն պատուիրանների խստութեամբ պահպանում էին: Յիսուս մերժում է նրանց գանգատը և ցոյց է տալիս, որ բանը լուացման մէջ չէ: Ոչ թէ ստամոքս անցնող կերակուրն է պղծում, ապականում մարդուս, այլ վատ, եպերելի մտածողութիւններն են, որոնք բերանիցն են դուրս դալիս, որովհետև այդ վատ մտածողութիւնները շատ չի քաշում, որ սիրտն են անցնում և իրանց տգեղ կերպարանքով երևան դալիս—ահա

այս մտածողութիւնները պէտք է արմատախիլ անել, այն ժամանակ սիրտն էլ մաքուր կլինի, սա է գլխաւորը և կարեւորը («Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք»): Եւ լիրաւի՛ քանիցս պատահեցինք այնպիսի անձնաւորութեանց, որոնց սրտից ինչ ասես, որ չէր դուրս դալիս—հայհուութիւն, մարդասպանութիւն, շնութիւն, զողութիւն, սուտ վկայութիւն, պարաւաւնք... բայց միւնոյն անձինքն արտաքուստ փառաբանում էին Աստուծուն շրթունքներով, զոհաբերութեամբ և լուացմամբ: Ի՞նչու համար Յիսուս Եսաւի մարգարէի զրուածքով փարիսեցիներին ապատակում է: Այս կտորը վերը լիշած մարդկանցն էլ յարմարւում է արդեօք:

2. Պուկ. ժա. 37: Ի՞նչ զանազանութիւն կալ այս և նախկին հասուածի մէջ:— Փարիսեցիների դպիրների չարութիւնն ու յատնի յափշտակասիրութիւնը Յիսուս մի անգամ ևս՝ աւելի սուր ձեռով, երեսներին է խփում: Ժողովուրդը, որ իրողութեան ներքինը թափանցելու անկարող էր, շլացել էր փարիսեցիների արտաքին լուացումից, իսկ Յիսուս մարդկանց արժանիքը որոնում էր ոչ թէ լուացման, այլ սրտի մաքրութեան մէջ: Յիսուսի տուած վճիռը («որ ինչ մտանէ ընդ բերան...») վերաբերում է միայն հարց տուողներին, թէ աշակերտներին՝ և մեզ ևս: Ուտելու ժամանակ լուացումն ոչինչ նշանակութիւն չունի սրտի մաքրութեան համար. կարելի է ուտել, ինչպէս էլ մարդս ուզում է և ինչ որ ունի. ուտելը հաւատի և սրտի մաքրութեան հետ ոչինչ կապ չունի, իհարկէ մաքուր ձեռով հաց ուտելն աւելի յաւէ: Բայց ինչու Յիսուս այս բանը պարզ կերպով ժողովրդին չի քարոզում:— Ժողովուրդը դեռ ևս ամուր կերպով կապուած էր նախնի աւանդութիւնների հետ, ուստի՝ նոյն խսկ դառն ճշմարտութիւնից խստ վիրաւորում էր (տ. փարիսեցիների ամբաստանութիւնը):

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒՄԾ.

Յաղագս պահ եցողութեան: Պատթէոս թ. 14. ի դէպ ջ. 16—18.

Փահեցողութեան օրինակներ սուրբ գրքից: Ի՞նչու էին պահում:— Անբաղդութեան կամ մեղք գործելու պատճառով: Լեռան քարոզի մէջ Յիսուս պախարակում էր նրանց, որոնք պա-

Հեցողութեամբ կամենում էին իրանց արդար ցոյց տալ: Ի՞նչ կարծիք կունենայ Յիսուս առհասարակ պահեցողութեան մասին: Աւանդել նոր նիւթը: Ի՞նչու էին պահում Յովհաննիսի աշակերտները:—Իրանց վարդապետիցն էին ուսել (տ. Նիսի աշակերտները): Յովհաննէսն այն հայեացքն ունէր, որ մարդս տխուր պիտի լինի իւր յանցանքների համար և ոչինչ չպիտի ուտի. ով լաւ կուտէ, կխմէ, նա չի կարող ճշմարիտ կերպով ապաշխարել: Ի՞նչու էին պահում փարուղ ճշմարիտ կերպով ապաշխարել: Իրանց գրուած էր, հենց դրա համար էլ պահում էին (տ. առակի պատուիրանազանց փարիսեցին): Այդ՝ ինքն իրան դատող սերունդը՝ իրան յանցաւոր չէր համարում, ուստի և տիրել ու սդալ չէին կարող: Այսպէս նրանք ապաշխարութեան արտաքին նշանը միայն ցոյց էին տալիս՝ առանց իսկական ապաշխարութեան, հենց դրա համար էլ կեղծաւորներ էին: Ի՞նչ պատասխան է տալիս Յիշամար էլ կեղծաւորներ էին: Ի՞նչ պատասխան է տալիս Յիշամար նրա աշակերտները չեն պահում:—Իրաւացի չէ համարում այդ նկատողութիւնը, որովհետև իւր աշակերտների համար երկնաւոր ուրախութիւն է բերել—աւետիք՝ աստուածական առաջնական գործառնութեան մասին, որովհետև երկնից դեսպանին, հոգեւոր փեսային (տ. § 41) իրենց մէջ ունէին, ուստի յարմար չէր նրանց վշտի նշաններ ցոյց տալ: Տիշրելու և սգալու ժամանակ բաւական ունէին, երբ փեսան այս իրանց մօտ չէր լինի:

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՏՈՒԱԾ

Ղարաթը սրբելու մասին: Մատթէոս ՓԲ. 1-14
տ. Ղուկ. Զ. 1-11: Ի դէպ. Ղուկ. ՓԳ. 11-17:

Հըմական պատճենները հայության մասին պահանջում է առաջարկ կատարել այս պատճենի համար: Այս պատճենը պահանջում է առաջարկ կատարել այս պատճենի համար: Այս պատճենը պահանջում է առաջարկ կատարել այս պատճենի համար:

Արդեռք լրաց ստքում հեղիւ Յէ Արդեռք պարսաւանքից
Աւանդել նոր նիւթիւ: Փարիսեցիների պարսաւանքից
պարզ նկատում է, որ նրանք շաբաթ օրը ամենաչնչին աշ-
խատանքն անգամ յանցանք էին համարում: (Դպիրների գրած
գրքերի մէջ 39 դիմաւոր, նոյնպէս երկրորդական աշխատանք-

Ներ արգելուած էին շաբաթ օրում, զորօրինակ կրակ վառել, հետևաբար և եփել, 2,000 քայլից աւելի չպիտի մասգալ, հետանդին մխիթարել, ոչ հսձել և ոչ հաւաքել): Փարիսեցիները պէտք է մտածէին, որ աշակերտները սոված են, ուրեմն կարեաց, նեղութեան մէջ, դրա համար էլ Յիսուս Քաւթի օրինակն է յիշում: Յիսուս ներում է աշակերտների յանցանքը, որովհետեւ նրանք շարունակ ծառայում են իրան: Եթէ քահանանաները, որոնք տաճարին ծառայելու պատճառով իրաւունք էին համարում իրանց շաբաթը կոտրել, Յիսուսի աշակերտներն ևս աւելի իրաւունք ունէին նոյն շաբաթը կոտրել՝ որպէս Յիսուսին ծառայողներ. Յիսուսի, որ տէրն է և տաճարի և շաբաթի: Այս, Յիսուս մեծ է քան թէ տաճարը. նա սրանով ուզում է ասել թէ ես աշխարհի փրկիչն եմ, բոլոր մարդոց դէպի Աստուած եմ առաջնորդում, հետեւաբար մեծ եմ քան զտաճար, որը ծառայում է միայն արտաքին ծիսակատարութեանց համար, և եթէ քահանաները տաճարի ծառայութեան համար իրաւունք ունին շաբաթը կոտրել, իմ օգնականներն իմ ծառայութեան համար ևս աւելի իրաւունք ունին—այսպէս ուրեմն՝ ես միայն իրաւունք ունիմ որոշելու, թէ շաբաթ օրում ինչ պիտի անել, շաբաթն իմ տէրը չէ, ես եմ նրա տէրը: Եւ այս իշխանութիւնը Յիսուս նրանով է ապացուցանում, որ բժշկում է ձեռը գոսացած հիւանդին: Յիսուս հաստատ կերպով գիտէր, որ փարիսեցիները՝ հենց մի այդ տեսակ բանի համար դարձն են մտած, որպէսզի առիթ ունենան դատաստանի առաջ գանգատուելու: Դթասրտութիւնը միշտ լաւ է (լինի ոչխար թէ մարդ), երբ էլ կատարես, շաբաթ օրը ևս աւելի պիտի գործել՝ որպէս Աստուծուն հաճելի գործ, որով շաբաթը սրբում է՝ քան թէ կոտրում: «Սիրեսցես զընկեր քո» պատուիրանը շաբաթին էլ է վերաբերում. որա կատարումն աւելի բարձր և կարևոր է քան թէ մարդոց դրած յօդուածներն ու մեռելալին հանգստութիւնը: Յիսուսի հայեացքը շաբաթի վերաբերութեամբ այս է՝ հանգստութիւնը լաւ բան է, բայց ուր կարիք կայ կամ առիթ բարի գործելու, այնտեղ աշխատանքը նոյնպէս բարի է և մինչև անգամ լաւագոյն:

III. ա.

Ի՞նչպիսի սրբազան արարողութիւններ ունինք մենք և ինչպէս ենք կատարում:—Հըէից հասկացողութեամբ լուացումն չունինք. որոշեալ օրեր պահք ենք պահում—որոշեալ կիրակուր ենք ուտում: Փոխանակ շաբաթ օրուայ՝ կիւրակէն ենք պահում, բայց ոչ այնպէս խիստ և սահմանափակ մտքով, ինչպէս հըէաները: Գրա փոխարէն ունենք մի քանի սովորութիւններ, զորօրինակ աղօթելիս կ անդ ու մ ենք, որ նշան է, թէ արի ենք և ոչ մեղաց մէջ թաթախուած. ձեռներո կ առ կ առ ու մ կ ամ կ ը ք ի ն դ ն ո ւ մ (չենք իշխան, տէր, հրամալող, այլ ծառայ Աստուծու և օրինաց). լուռ ենք (Աստուծու հետ ենք խօսում). ոմանք հոգաթափ հագնում (սրբութեան նշան), երեսներս խաչակնքում (որով յալտում ենք, թէ քրիստոնեալ ենք), ծունը դնում, չոքում, ոտնամանները հանում: Կիւրակի օրը մաքուր շոր ենք հագնում. «Հրաժարիմքի» ժամանակ շուռ ենք գալիս...: Ի՞նչ սովորութիւններ ունին օտարադաւանները: Այս սովորութիւնների վրայ ինչ կմտածէր Յիսուս:—Հին հըէական սովորութիւնների մասին Յիսուս անշուշտ կասէր—եթէ դու այս սովորութիւնները կատարելիս մտածում ես սուրբ բաների վրայ՝ բարի է, իսկ եթէ ոչ, այն ժամանակ դու խաբում ես մարդկանց, որով նմանում ես փարիսեցիներին, որոնք աւելի տառերին քան թէ մտքի վրայ էին ուշադրութիւն դարձնում: Եթէ դու այդ բոպէներում մտածում ես սուրբ բաների վրայ (օրինակ) և մոռանում ես բոլոր արտաքին ձեւապաշտութիւնները, այն ժամանակ դու գլխաւորը կատարել ես, վասնզի «Աստուած հայի ՚ի սիրտ»:

Մեր նախնիքն ինչու են մտցրել այս սովորութիւնները: Արանով նրանք ևս աւելի զորեղ կերպով մտածել են սուրբ բաների վրայ (ապացոյց). սրանով նրանք մեր մէջ սուրբ զգացմունքներ են ծնուցանում և դէպի բարեպաշտութիւն առաջնորդում: Ով չի յարգում այս սովորութիւնները, նշանակում է նա բարեպաշտութիւնը չի գնահատում: Նրանց արժանաւորութիւնը կայանում է նրանում, որ այդպիսի անձնաւորութիւնները բարեպաշտութեան երկրպագուներ են դառնում,

բայց զգուշանալու է, որ չափազանցութեան չհասցնուի և նոյն չափ պատուէ ու յարգէ, ինչպէս պատում և յարգում ենք հաւատոր, սէրը, հաւատարմութիւնը դէպի Աստուած: Ով այդ սովորութիւնները չափից դուրս բարձր է յարգում, տիմար է և կեղծաւոր: Ով կատարում է այդ սովորութիւնները, դեռ չէ նշանակում, թէ նա բարեպաշտ քրիստոնեայ է, բայց ամենայն մի բարետաշտ քրիստոնեայ կատարում է այդ:

III. Բ.

Յիսուսի վճիռը շաբաթը սրբելու մասին արդեօք մեր կիւրակէն տօնելուն էլ վերաբերում է:—Այս, մենք ևս պիտի հանդիսաւ լինինք և չաշխատենք, բայց ոչ թէ նրա համար որ հանդիսաւ լինելը սուրբ բան է, այլ որովհետեւ հանգստութեան ժամերում սուրբ բաների վրայ մտածենք—հանգստութիւնը միջոց է, իսկ բարեպաշտութիւնը՝ նպատակ: Այդ սովորութիւնները կատարելով մեր մէջ ևս աւելի բարեպաշտութիւն է ծնում: Միեւնոյն բանն է, երբ մենք եկեղեցի ենք գնում, տեսնում ենք ուրիշներին աղօթելիս, լսում ենք շարականների զմայլեցուցիչ եղանակները, քարոզչի խօսքը: Բարի մտածմունքները ժամերգութիւնից յետոյ ևս պէտք է մնայ մէջ (ապա թէ ոչ ժամերգութիւնը լոկ արտաքին գործողութիւն եղած կլինէր) և ամենալաւ ապացոյն այն է, երբ դրա հետեւանքը արտայալուում է բարի գործերով (օրինակ): Ամենայն օր մարդս բարեպաշտ պիտի լինի, բայց առաւելապէս կիւրակէ և տօն օրերում: Մեր նպատակին թող հաննենք, լինի այդ հանգիստ առնելով թէ, աշխատելով, այդ միեւնոյն է: Քրիստոս՝ շաբաթի տէրը ևս նոյնպէս էր վարվում և քարոզում: Արտաքին ձևով կիւրակնօրեալ տօն կատարելը՝ լինի տանը թէ եկեղեցում, դեռ ևս չէ նշանակում, թէ մենք մեր նպատակին հասանք, այլ դրանով մենք գիմում ենք դէպի նպատակ: Նա չէ բարեպաշտ քրիստոնեան, որը կանոնաւոր կերպով եկեղեցի է գնում, այլ ամեն բարի քրիստոնեայ սիրով յաճախում է եկեղեցի: Եկեղեցում աղօթելը ունի իւր պատճառները: Մեր Աստուածաբան և ճարտարախոս Գրիգոր տաթեացին ասում է. «Եկեղեցին մի պատշաճաւոր և զգուշաւոր տեղ է Աստուածու հետ խօսելու համար, երբ եկեղեցուց դուրս ենք, զգում ենք

որ հեռու ենք Աստուածանից: Արդարեւ աստուած ամենուրեք է, բայց մարդս եկեղեցում միայն զգում է, թէ մօտիկ է նրան, օրինակ թագաւորը ևս իւր իշխանութեամբ ամեն ուրեք է իւր երկրի մէջ, բայց նրան տեսնել ցանկացողները թագաւորական պալատն են գնում»:

IV.

I. Թագ. ժղ. 7. «Մարդ հայի յերես եւ Աստուած հայի՝ ի սիրտս» (տ. հ—ո. § 53. ն—ո. § 20):

Թ. ա. կրնթ. դ. 6. «զիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»: Կը կ ն ե լ—«Տէր, սիրեցի զվայելչութիւն...»: Տնտը ցիս որդեակ զսիրտ քո....» Մտթ. ժբ. 12. «պարտ է՝ ի շաբաթու բարիս դորձել»:

V.

Երբ դու կատարում ես սրբազն ծէսերը կամ տեսնում ես, ի՞նչ ես մտածում: Հնումն ի՞նչպէս էին կատարում: Արդեօք աղօթելն էլ արտաքին սովորութիւն է (բարեպաշտ սրտի լեզուն մի տեսակ խօսակցութիւն է Աստուծու հետ—ահա սա է քրիստոնէի կեանքը): Ի՞նչ է արարողութիւնը, ծիսակատարութիւնը: Ի՞նչպէս կարող ես դու շաբաթ օրն ամենից լաւ պահել: Ի՞նչ կասես այն մարդկանց, որոնք եկեղեցի չեն գնում արդարանում են նրանով, թէ հարցը ի՞նչ տեսակ սիրտ ունենալն է, իսկ բարի բան կարելի է տանն էլ, փողոցումն էլ, զբունելիս էլ մտածել: Արդեօք մենք ևս կարող ենք Յիսուսի նման ասել—«Հայր իմ մինչեւ ցայիժմ գործէ եւ ես գործեմ»: Ի՞նչ կասէք նրանց, որոնք ստորերկեայ հանքերումն են աշխատում և միջոց չունին եկեղեցի գնալու և աղօթելու: Ի՞նչ կմտածէր Յիսուս հրէից զոհի, ծիսակատարութեան վրայ: Մենք չենք պահում: Յիսուս չպատուիրեց մեզ պահել: Ի՞նչը կարող է արդեօք փոխարինել նրան, երբ մենք մեր սիրտը, մեր հանդիստն է արդեօք փոխարինել նրան, երբ մենք մեր սիրտը, մեր հանդիստն էնք զոհում—«տո՛ւր ցիս որդեակ...»: Յիսուս առաջինն էր, որ ենք զոհում—«տո՛ւր ցիս որդեակ...»: Յիսուս առաջինն էր, որ այս տեսակ զոհը կատարելապէս բերաւ: Ի՞նչպէս կը մեկնէք Ասմուէի խօսքերը, թէ «Լաւ է ունկնդրութիւն քան զզոհ»: Ասմուէի խօսքերը, թէ «Լաւ է ունկնդրութիւն քան զզոհ»:

Ա. 10—23. «Լուարուք զբան տեսան, իշխանք սո—Եսայի. Ա. 10—23. «Լուարուք զբան տեսան, իշխանք սո—

դոմացւոց: Ունկն դիք օրինաց Աստուծոյ, ժողովուրդք գոմորացւոց: Զի կայ իմ եւ յաճախելոյ զոհիցդ ձերոց, ասէ Տէր, յագեալ եմ ողջակիզաց խոյոց ձերոց, և զճարպս զառանց և զարիւն ցլուց և նոխազաց ոչ կամիմ, եւ ոչ թէ զայցէք յանդիման լինել ինձ...»: Երեմիա ժկ. 12. «Զի թէ պահեցն, ոչ լուաց խնդրուածոց նոցա. եւ եթէ մատուսցեն ողջակէղ և զոհս, ոչ համեցաց ընդայն:» Ամփս. ե. 22. «Զի թէ մատուցանիցէք զողջակէզս և զզոհս ձեր, ոչ ընկալաց:» Թ. Յակ. բ. 8—11. Վարժել «Ոչ ամենայն որ ասէ ցիս...»: «Երանի այնոցիք, որ լսեն զբանն Աստուծոյ...»:

§ 45.

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆԸ

Նպատակ: Յիսուս և մի սամարացի կին Յակովը Հըմհորի վրայ:

I.

Ո՞վքեր են սամարացիները: Ի՞նչպիսի յարաբերութիւն ունին հրէանէրի հետ (յիշել § 13 և 19.): Սաների ունեցած տեղեկութիւնների վրայ կարելի է աւելացնել, որ այս մոլեւանդ հրէաստանցիները Գալիլիայ գնալիս, որպէսզի հերետիկոս սամարացիների երկիրը մտած չլինէին, անցնում էին Յայնկոյս Յորդանանը (Պէրէա): Եւ ընդհակառակն բարեպաշտ Գալիլիացին Երուսաղէմ ուխտ գնալիս չէր անցնում Սամարիայի միջով, որ ամենակարճ ճանապարհն էր, այլ Յանկոյս Յորդանանով: Մի դպիր կարծում է—«Ուտել սամարացու մի կտոր հացը՝ միենոյն է թէ խոզի միս ուտել»: Յիսուս ի՞նչպէս է վարփում սամարացիների հետ: Նրա վրկչական և ընկերական սէրը չէր կարող համաձայնել հրէական նախապաշարման հետ (տ. նոյնիսկ հեթանոսների վերաբերութեամբ § 12. 23 ն—ո): Նա իւր հայեացքն արդէն յայտնել է տասն բորոտների պատմութեան մէջ՝ Սամարացու առթիւ, ուստի և ընկերական սէրն առակի մէջ տալիս է անաստուած և արհամարհուած Սամարացուն և թէ հրէից քահանաներին և ղետացուն:

Ո՞րտեղ է Յակովի ջրհորը, ուր սամարացին և Յիսուս իրար պատահեցին: — Սա Խառանի ջրհորը չէ, ուր Յակովի Հուաքէլի հետ ծանօթացաւ և սիրեց, ուր Եղիազարը Որերեկացին հարսն ընտրեց, սա երևի մի ջրհոր է, որ Յակովի փորել է իւր ընտանիքի և հօտի համար: Այս ջրհորը գտնւում է Գերադ և Գարիզին լեռների մէջ: Սիւքեմի մօտ Արքահամն առաջին սեղանը կանգնեց Աստուծու համար. այստեղ բնակուեց Յակովը. Սիւքեմի մօտ թաղեցին խրայէլացիները Յովակի ոսկորները. այստեղ էր, որ Յեսուն ժողով արեց (տ. § 44 հ—ո.): Բայց գարերից յետոյ նրա որդւոց մէջ ատելութիւն ընկնելով՝ բաժանուել էին և սամարացիները հրէից բարելոնի դարձից յետոյ Գարիզին լերան վրայ առանձին տաճար էին շինել (§ 70. հ—ո.): Տաճարն արդէն 100 տարի կինէր, որ հրէաները կործանել էին, սակայն սամարացիք քանդուած տաճարի աւերակների վրայ աղօթում էին իրանց Աստուծուն և հրէաներին տառելով ատում: Տինուր տեսարան—վերելում երկնքում մի բարի Աստուած, իսկ ներքեւում Աստուծու ժողովուրդը երկու կու մասնի բաժանուած և որպէս երկու թշնամի եղբայրներ, դէմ հանդիման բանակած—այստեղ Երուսաղէմ և Պօրէա, իսկ այստեղ Սիւքեմ և Գարիզին:

Թերեւս այս պատմութիւնը մի բարի օրինակ ցոյց տայ մեզ: Յիսուս Յուղակի ցեղից, իսկ սամարացի կինը տասը կոտպաշտացած ցեղերից մինը, երկուսն էլ Յակովի որդիք՝ Յակովի ջրհորի վրայ: Այդ ինչպէս եղաւ, որ նրանք ջրհորի վրայ պատահեցին: — Յիսուս պէտք է այստեղ հանգստանար և ջուր խմէր (ինչպէս Յակովը և Եղիազարը), իսկ կինը քաղաքից գալիս է ջուր տանելու (ինչպէս Որերեկան և Հռաքէլը): Յիսուս ջուր է խնդրում: Արդեօք կինը կհետևէ Յիսուսին: — Սա մի գեղեցիկ բան կինէր, եթէ, գոնէ Յակովի երկու որդիքը, Յակովի ջրհորի վրայ միաբանուէին և հրէից ու սամարացւոց կին ատելութիւնը Յուղակի տան ամենալաւ որդւոյ միջնորդութեամբ՝ սիրոյ փոխարկուէր:

II. ա.

Աւանդել նոր նիւթը: (Յովհ. Փ. 3—42):
Անօթի, ծարաւ, ճանապարհորդութիւնից դադաչ:

այնակ՝ կէս օրուայ շոքին հանգստանում է Յիսուս Յակովի ջրհորի վրայ: Թերեւս տխուր մտածութեանց մէջ ընկզմած, յիշէր իւր ազգի անցեալ բաղդաւոր և ներկայ տխուր բաժանման, եղբայրական ատելութեան վրայ: Յաւիտենական լուռթեան դատապարտուած ջրհորը, երկնաբերձ Սիւքեմի պարիսպները և Գարիզին լերան տաճարի աւերակներ՝ կարծես իրանց խորհրդաւոր լուռթեամբ ամենայն ինչ պատմում էին: Ահա դալիս է անջատուած, կօրուսեալ ցեղի աղջիկներից մինը ըլլը հորից ջուր հանելու: Կինը զարմանում է, որ հրէան (երեխ արտասանութիւնից է նկատում հրէա լինելը) սամարացուց ջուր է խնդրում, բայց և այնպէս մօտեցնում է նրան դոյլը: Գարաւին մոռանում է խմելը, որովհետեւ այնտեղ մի հոգի կար որսալու և որսում է: Յիսուս կինջ ու շադրութիւնը նը նրա վրայ է դարձնում, որ իւր մօտ կանգնողը սովորական մարդ չէ. նրան լսելը, նրա հետ խօսելը աստուածային պարզեց պիտի համարէ. որ նա կինջն ոչ թէ միայն կենդանի ջուր, այլև աւելին կարող է տալ:

Յիսուսի օտարոտի խօսակցութիւնը կինջ ուշադրութիւնը գրաւում է. նա չի լմբունում այս խօսքերի խակական խմաստը: Միթէ նա մեծ է իրանց նախահայր Յակովից. որտեղից պիտի տայ կենդանի ջուրը, վասնդի ոչ ինքը և ոչ օտարականն ունին այն դոյլը, որով կարելի լինելը ջուր հանել:

Սրանից յետոյ Յիսուս կամենում է կինջ հետաքրքրութիւնը շարժել, թէ ինչ է կենդանի ջուրը. թէ նրա խմողը ոչ թէ ժամերից յետոյ չի ծարաւիլ, այլ յաւիտեան կարիք չի ունենայ խմելու. թէ այդ ջրից խմողը իւր մէջ կենդանի աղբիւր (հոսող ջուր) կրւնենայ, որ իւր ամբողջ կեանքի ընթացքում կըդիւէ, որին մահն անդամ չի կարող վերջ գնել եւ մինչեւ հանդերձեալ կեանքն անընդհատ կըդիւէ: Կինը հետաքրքիր է, թէ այն ինչ ջուր պիտի լինի. մի այլպիսի ջուր անդամակատելի կլինի Ասմարիայի տապացեալ երկրի մէջ—որքան նեղութիւներից ազատ պիտի լինին հարիւրաւոր մարդիկ, քանի քանիսն այլև չպիտի ստիպուին օրուայ տօթին ջրհոր գալու: Կինը Յիսուսին դարձեալ չհասկացաւ—փրկչի խօսքն աւելի խորն է, քան թէ Յակովի ջրհորը: Մի բան միայն կինը

պարզ նկատեց, որ այս բարի մարդը նոյնպէս մեծարուէ, ինչպէս Յակովը:

Կինը դարձեալ չէ ըմբռնում: Յիսուս նոր ճանապարհ է ընտրում—նա հարցնում է կնոջը. «Ե՛թ կոչեա գալր քո»: Թէւ այս խօսքն ըստ երեսյթին չնչին է, բայց կնոջ վրայ մեծ տպաւորութիւն է անում—կինը զարմանում է, թէ սրտեղից կանչէ իւր օրինաւոր ամուսնուն, քանի որ չունի: Փրկչի խօսքն ստիպում է կնոջը լիշելու իրան սրտին շատ անդուրեկան մտքեր (որ նա ապօրինի ճանապարհով է ընթանում): Նա աշխատում է ստախօսութեամբ ազատել իրան, բայց անօդուու օտարականը հաւանութիւն տալով նրա ստախօսութեան—«բար-ւոք ասացեր», կրկնում է իւր խօսքերը: Կարճ ժամանակից յետոյ յայտնում է նրան իւր արատաւոր կենցաղավարութիւնը, («Հինդ այր փոխեալ է քո եւ զոր այժմս ունիս չէ քո»), որը յալժմ ծածուկ էր պահում: Ծանը տպաւորութիւն են անում կնոջ վրայ այս խօսքերը—ամօթ, զղումն, երկիւղ, զարմանք. կինը համոզուած է, որ օտարականին անծանօթ չէ իւր կենցաղավարութիւնը: Նա ապշած է—արդեօք որտեղից գիտէ օտարականն իւր զաղտնին. արդեօք մի ուրիշ անդամ իրանց քաղաքից անցել, լսել է իւր մասին. արդեօք մի աստուածալին կամք է յայտնել նրան, ալդ ողջ մէկ է, հարցը նրանումն է, որ կինն այս դէպքը ընականից դուրս է համարում: Կինը ոչինչ մեկնութիւն չկարողանալով տալ և միւնոյն ժամանակ ներքին անհանգոտութիւնից ազատուելու համար՝ օտարականին մարդարէի տեղ է ընդունում, որը գիտէ ծածուկներն էլ, ուստի առաջարկում է նրան հին վէճի լուծումն, որ սամարացիների և հրէաների մէջ զարերից ի վեր տևում էր—արդեօք որ պիտի աղօթել, Գարիղին, թէ Պորէայ լերան վրայ (տ. I. Պովս. Ժ. 7. V. Պովս. իէ. 4 III. թագ. հ. 29. թ. 3):

Այս հարցը հաճելի է Յիսուսին. նա արդէն կիսով չափ որսացել է կնոջ սիրու. կինը փրկչին հաւատում է—նրա մէջ արդէն հաւատոյ կայծը զարթել է: Յիսուս յարմար է համարում նախ այս վէճի առարկան լուծել, ցայց տալով իրան հրէից կուսակցութեան պաշտպան (տուն 22 յարմարէ 21-ից առաջ դնել, որովհետև 23-ի կապը չի յարմարվում): Հրէաներն արդար են ալդ հարցում, որովհետև դոք սամարացիներդ կա-

մարականութեամբ բաժանուեցաք ընտրեալ ժողովրդից (քեզա-զանով պէտք է երկրիս բոլոր ազգերն օրհնուին) և եթէ դուք նրանց Աստուծուն աղօթում էք, չգիտէք թէ ինչ էք անում, որովհետև Սստուծու տնօրէնութեան համաձայն փրկու-թիւնը հրէաներից և Վեսսիալից պիտի գալ. դուք ձեր բա-ժանուելով ձեր սրտերն էլ հեռացնում էք հրէաներից՝ եկող փրկութիւնից: Այնուհետև Յիսուս հարցն ախպէս է վճռում— ամենևին չպիտի հարցնել, թէ ուր կարելի է աղօթել, այս թէ այն լերան վրայ. ոչ ձեր ժողովրդի և ոչ մերի մէջ պիտի որոնել ճշմարիտ Աստուծուն. ոչ մի տեղ և ոչ մի ազդ չպար-ծենայ դրանով: Ինչո՞ւ:— Որովհետև Աստուած հոգի է, նրան ուր աղօթելիր սահմանփակուած չէ որոշ տեղում. հարցը նրա-նումն է, թէ ինչ սրտով ես աղօթում: Աղօթիր ուր որ էլ կա-մենաս, միայն ճշմարիտ սրտով և նա՝ բարձրեալը կլսէ: Մին-չե ալժմ միայն Յիսուսն է ալդպէս աղօթել: Բայց փրկիչը մար-գարէանում է, որ հալր Աստուածը շուտով այդ տեսակ աղօ-թողներ կունենայ նոյն իսկ սամարացիներից էլ («Ճշմարիտքն երկրագութ երկիր պազանիցեն...»):

Տգէտ կինն ըմբռնում է այս բարձր վարդապետութեան ճշմարտութիւնը—նա հաւատում է, որ իւր ժողովրդի Վեսսիան (Պովս. Ժը. 15) այս միւնոյնը կամ սրա նման վարդապետու-թիւն պիտի քարոզէ: Յիսուս վեր է առնում տարակուսանաց քողը և յայտնում է սամարացի կնոջը, որ ինքն է խոստա-ցեալ Վեսսիան, որին թէ սամարացիք և թէ հրէաներն սպա-սում են: Կնոջ զարմացքը մեծ է. մի այդպիսի անձն սուտ չի խօսիլ: Աւրախաւթեան մէջ մոռանում է ջրի սափորը և շտա-պում է քաղաք՝ աւետելու համաքաղաքցիներին, որ գան սպասեալ Վեսսիալին տեսնելու:

Աշակերտները զառնում են քաղաքից: Հրէական հոգւով մեծացած ունկնդիրները զարմանում են, որ Յիսուս մի սամա-րացու հետ խօսում է («կին մի» բառը ցոյց է տալիս, թէ որ-քան փոքր նշանակութիւն ունէին կանայք այն ժամանակ): Սշակերտներն աւելի նրա վրայ են զարմանում, որ իրանց բե-րած հացը չկերած՝ կուշտ է: Նրանք չգիտէին, որ Յիսուս հո-գեպէս կշտանալու մասին էր խօսում—սամարացի կնոջ դարձը Յիսուսի համար հոգեոր հաց էր:

Սամարացիներն եկան ջրհորի մօտ՝ դրդուած կնոջ համբաւից: Յիսուս սիրով ընդունում է նրանց խնդիրը և երկու օր մնում է. քարոզում և ուսուցանում է, թէ ինչպէս պէտք է ճշմարիտ Աստուծուն պաշտել: Փողովուրդը թէ ականջով և թէ սրտով լսում է փրկչին, որը երկու օր շարունակ վայելում է իւր հօր պատրաստած կերակուրը փրկչական ուրախութեամբ: Փողովուրդն էլ ընդունում է նրա շրթունքներից կենդանի ջուրը, որը նրանց փրկութեան փափագող սիրտը հովացնում է: Յակովը ջրհորից մի ուժպ ջուր բերին իրենց քաղաքը, որը նրանց սրտի մէջ յարատել բղիսում է և պապակը զովացնում՝ թէ այստեղ և թէ հանդերձեալում: Նրանց հաւատը դէպի Միսսիան, որ հրէաներից եկաւ, օգնեց նրանց Հրէատանը և Սամարիան հաշտուեցան իրար հետ նախահայր Յակովը ջրհորի վրայ:

II. բ.

Բարոյական—կրօնական նիւթի մէջ խորասուզելիս պիտի մասնաւոր ուշադրութիւն դարձնել այս՝ ինքն ըստ ինքեան կրօնական նիւթի հետևեալ զիստուր կէտերի վրայ, որոնք արգէն բացատրուած են:—Ատելութիւնն ու արհամարհանքը խոչնդու չեն լինում Յիսուսի փրկչական սիրուն—նա սիրում է այն ազգի որդւոց, որոց ատելրվ ատում են իւր համազգիքը: Փրկիչը մի հոգի ազատելու համար մոռանում է ուտելը—նա կուշտ է այն կերակրով, որ իւր հայրն է պատրաստել: Յիսուս, զարմանալու արժանի խմաստութեամբ՝ որսում է («Եղերուք խորագէտք իրրեւ զօձո») սամարացի կնոջը՝ քաջ զիտնալով, որ երկնքումը մեծ ուրախութիւն կլինի մի քաջ զիտնալով, որ երկնքումը մեծ ուրախութիւն կլինի մի քաջ զիտնալով, որ բարեկալին է, որ բաժանեալ եղբայրներից մինի որսալովը, միւսներն ևս հետզհետէ իրանք պիտի զան ու այսպիսով պիտի վերանայ ատելութեան և բաժանման այն պատուարը, որ դարերով բաժանած ունէր երկու եղբայր ազգերին: Նրա ջանքը պահկում է—Յիսուս մեծ շարժում ձգեց սամարացւոց երկրում: («Աստուած կամի զի ամենայն մարդկի կեցցեն եւ ի գիտութեան ճշմարտութեան եկեցն»): Սամարացի կինը հաւատում է Յիսուսին նախ՝ որպէս երեխայ յափշտակուած նրա հրաշքից, յետոյ որպէս մաքսաւոր

Զակըս, որովհետև դժած և ողորմած վարուեց իւր հետ, մի մեղաւոր կնոջ հետ, իսկ ամենից վերջը՝ ինչպէս միւս սամարացիները, որպէս քրիստոնեայ, հաւատում է նրա աստուածացին խօսքերին (տ. § 22): Սամարացիների հաւատը բարձր պիտի գնահատել, որովհետև պիտի պատերազմէին իրանց հետ՝ հաշտուելու այն գաղափարի հետ, որ իրանց ատող, արհամարհող ժողովրդի (հրէանէրի) միջից ծնուած մինին որպէս Պեսսիայ պիտի ճանաչէին: Սակայն Աստուծու խօսքը Յիսուսի բերանով աւելի զօրաւոր է, քան թէ ատելութիւնը, ուստի և Յիսուս նրանց երկրում ձեռք է բերում Յակովը ջրհորի մօտ մի ուրիշ աւելի զեղեցիկ ջրհոր, որից անընդհատ յաւետենական կեանք պիտի բղխէ («Երանի որ լսեն զբանն Աստուծոյ....») և այսպէս հիմք է դնում հօր և հոգլոյ ճշմարիտ երկրպագութեան: Թէ Յիսուսի խօսքերը բեռնաւորներին և վաստակեալներին որ աստիճանի խաղաղութիւն պարզեող, մխիթարող և կեանք ներշնչող զօրութիւն են ունեցել, այդ մեզ յայտնի է մինչև ցարդ նրա վարած կեանքից և քարոզութիւններից («Եկայք առիս ամենայն վաստակեալք....»): Այս պատմութեան մէջ փրկչի բոլորովին նոր խօսքն այս է. «Հոգի է Աստուած.... Աստուծուն հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութիւն տալ միւսնոյն նշանակութիւնն ունին—եթէ Աստուծուն հոգլով, այսինքն ապտուածահանոյ մտածողութեամբ, զգացմամբ և կամեցողութեամբ (Ժանձրացեալ օրինակներ) ենք լիշտում մարդկալին հոգլոյ մէջ, այս ձեւի մտածողութիւնն ու զգացումն համապատասխան է աստուածային մտածողութեան եղանակին և սա է միակ ճշմարիտ ձեւը: Եթէ աստուած մարմին չէ, այլ սոսկ հոգի, ուրեմն և նա չի կարող մարդու նման մի որոշ տեղ լինել երկրիս վրայ, այլ՝ ամենուրեք է թէ երկրիս վրայ և թէ երկրիս մէջ, հետեւաբար և ամեն տեղ կարելի է աղօթել նրան:

III. ա.

Նախ քան Քրիստոս ինչպէս էին աղօթում Աստուծուն: — Հեթանոսներն իրանց աստուածներին ընդունում էին, որ մարմին և հոգի ունին, ինչպէս մարդիկ և դրա համար էլ մարդկալին յարգանք էին տալիս (օրինակներ): Խրացէլացւոց ազգին առաջին անգամ յայտնուեց, որ աստուած հոգի

է: Բայց չնայելով սրան՝ նրանցից շատերը դեռ ևս հեթանոսական հայեացքներ ունեին: Յակովը փորձով ուսաւ, որ Աստուած բեթելումն էլ է: Սինայի ժողովաւրդը Աստուածուն հաւատալու համար տեսանելի տեղապահի կարիք ունեցաւ, դւահամար էլ վերջը ուխտի տապանակին աստուածական ոյժ, զօրութիւն ընծայեց (տ. հ—ո. § 48), ուստի և բազմից ընկաւ կռապաշտութեան մէջ: Սողոմոնն առաջինն էր, որ այն միտքը յայտնեց, թէ Աստուած ոչ թէ միայն տաճարումն է ընակւում, այլ ամբողջ տիեզերքում: Որովհետև Աստուծու էութիւնը ճիշտ էր ըմբռնուած, դրա համար էլ Աստուծուն աղօթելն ուղիղ եղանակով էր կատարուում: Մովսիսից սկսած պաշտում էին Աստուծուն՝ կատարելով նրա պատուէրները՝ մարդկային աղատ կամեցողութեամբ, ուրեմն «Հոգւով»: Բայց շատ չանցաւ, որ զօհաբերութիւնը (չնայելով մարդարէների յորդորներին) և տաճարում կատարուած ծխակատարութիւնները (տ հ—ո. § 44) Աստուծուն սրտով չափ հնազանդ լինելու նշանակութիւն ստացան: Աստուածապաշտութեան այս սխալ ձեւը, որը շատերին դէպի կեղծաւորութիւն առաջնորդեց, խորտակեց Յիսուս իւր քարոզութիւններով և որոշ սկզբունք դրաւ, որ Աստուծուն պաշտել և աղօթել կարելի է միայն աստուածահաճոյ մտածողութեամբ և ահա այս է սէր առ Աստուած և առ ընկերութիւնը (ի դէպ կարելի այստեղ կարդալ Ի. թ. Յովհ. Թ. 16 կոչուածը (ի դէպ կարելի այստեղ կարդալ Ի. թ. Յովհ. Թ. 16 սէրը որպէս պարունակութիւն աստուածալին ողու, ուրեմն և հոգեւոր աստուածապաշտութիւն): Յիսուս չէր կամենում որանով ծխակատարութիւնը և արտաքին աստուածապաշտութիւնը չնշել, վերացնել, նրան շատ լաւ յայտնի էին, որ մարդիկ իրանց ներքինն արտակայտելու համար՝ արտաքին նշանդիկ կարիք ունին, այլ նա կամենում էր արտաքին աստուածապաշտութեանը իւրեան վայել տեղը յատկացնել — արտաքին աստուածապաշտութիւնը մի տեսակ սպասաւոր և կարապետ պիտի համարել մարդուս ներքին զգացման (թանձրացեալ օրինակներ տ. հ—ո. § 44):—

III. E.

III. Բ.
Յիսուսի ընդունելութիւնը Կաղաքէթում և Սամարիայում
համեմատելով միմեանց հետ, (նոյնպէս և ուրիշ ընդունելու-
թեան և մերժման օրինակները՝ թէ անցեալ և թէ ներկայ

ժամանակում) աւելի ևս կզօրացնենք ծանօթ՝ իմաստը—«Յիւրսն եկն եւ իւրքն զնա ոչ ընկալան....»:

IV.

Յովհ. դ. 24. «Հոգի է Աստուած եւ երկրպագուացն նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկրպագանել»;

Ա. Յովհ. դ. 16. «Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք զսէլն Աստուծոյ՝ զոր ունի առ մեղ»:

Կրկնել—«Յիւրան եկն եւ իւրքն զնա ոչ ընկալան...»:
 (Յովհ. ա. 11. 12.):

V.

Ի՞նչպէս կարող ես դու «հոգւով» առ Աստուած աղօթել:
Ո՞ր առ Աստուած աղօթելու ձեզ միսալ է: Յիսուս ի՞նչպէս
աղօթեց առ Հայր: Ցոյց տուէք որ Յիսուս միշտ սիրոյ սահ-
մանում մնաց: Ի՞նչպէս կարող ես դու քո սիրով Բարձրելոյ
օթեան դարձնել: Մեր այս պատմութիւնը ևս մի տեսակ հրա-
շեց պատմութիւն է (տ. Մովսիսի գործած հրաշքները—ջուր
քարից, կանայի հարսանիքը): Ի՞նչպէս պէտք է խմել փրկչի
կենդանի ջուրը:

Ա Ե Կ Ն Ե Լ և Վ ա Ր Ժ Ե Լ — Ս լ ր ա ք ի դ . 27—29. «Զ ի լ շ ա տ ա կ ի մ ք ա ն զ մ ե լ ր ք ա ղ ց ը է , ք ա ն զ ի ե ւ ժ ա ռ ա ն գ ո ւ թ ի ւ ն ի մ ք ա ն զ ի ս ա ր ի ս խ ս մ ե ղ ու : Ո յ լ ք ո ւ տ ե ն զ ի ս՝ տ ա կ ա ւ ի ն ք ա ղ ց ե ց ե ն ե ւ ո յ լ ք ը մ բ ե ն զ ի ս՝ տ ա կ ա ւ ի ն ծ ա ր ա ւ ե ս ց ի ն » (տ . Պ տ թ . ե . 6) : Ս ա ղ մ ո ս խ ա . 2. «Ո ր պ է ս փ ա փ ա կ է ե ղ ջ ե ր ու յ ա ղ բ ե ր ս ջ ո ւ ր ց , ա յ ն պ է ս փ ա փ ա կ է ա ն ձ ն ի մ ա ռ ք ե զ Ա ս տ ու ա ձ »:

Սաղմոս ճլր. 1—10. «Տէր, փորձեցեր զիս եւ ծանեար... եւ աջ քո ընկալցի դիս»: Եսայի ծե. 10. 11.—«Զորօրինակ, եթէ իշանիցէ անձրեւ կամ ձիւն երկնից եւ անդրէն ոչ դառնայ մինչեւ արբուսցէ զերկիր, ծնցի և բղխեսցէ սերմն սերմանողի եւ հաց ի կերպակուր, այսպէս եղիցի բանն իմ, որ ելանէ ի բերանոյ իմմէ. մի դարձի դատարկ մինչեւ կատարեսցէ զոր ինչ կամիցիմ եւ դիւրեցից զմանապարհս քո եւ զմանապարհս իմ պահեսցես»: (Յովհ. ժգ. 6.) «Ասէ ցնա Յիսոսս, ևս եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ առ հայր, եթէ ոչ ինեւ»: I. Թ. Կրնթ. գ. 16—«Ոչ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի Հեղ»: Երեմիա. լու. 31—34. «Ահաւասիկ աւուրք գան, ասէ

տէր, եւ ուխտեցից տանդ իսրայէլի եւ տանդ Յուղա ուխտ նոր. ոչ ըստ ուխտին զոր ուխտեցի ընդ հարս նոցա, յաւուր լորում առի զձեռանէ նոցա հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց, զի նոքա ոչ կացին յուխտին իմում եւ ես անփոյթ արարի զնոցանէ, ասէ Տէր: Այլ այս է ուխտն զոր ուխտեցից տանդ իսրայէլի. յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր, տաց զօրէնս իմ ի միտս նոցա եւ ի սիրտս նոցա գրեցից զնոսա եւ եղեց նոցա յԱստուած. եւ նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ»:

Վարժութիւն—«Ոչ գիտէնք եթէ ի տան Հօր....»: Եւ մեք հաւատացաք....»: «Ոչ միայն հացիւ կեցէ մարդ....»: «Մարդ հայի յերեսու....»: «Երանի որոց ոչ իցէ տեսեալ....»: «Բայց եթէ ինչ ի Քրիստոս....»: «Տուր ցիս որդեակ....»: «Եկայք առիս ամենայն վաստակեալք....»:

§ 46

ՄԱՐԻԱՄ ԵՒ ՄԵՐԹԱ

Նպատակ: Յիսուս Բեթանիայում, որպէս հիւր երկու քոյլերի մօտ:

I.

Բեթանիան դտանւում է Երուսաղէմի արևելեան կողմը մի ժամ հեռաւորութեամբ: Ոչ ամենքը Յիսուսին հիւր էին կանչում իրանց տուն (տ. Կանայի հարսանիքը, մաքսաւոր Մատթէոսը և Զակրէոսը): Անշուշտ երկու քոյլերը բարեպաշտ են եղել, որ Յիսուսի գալստեան վրայ ուրախացել են ինչպէս Զակրէոսը: Ի՞նչ կանեն քոյլերը, երբ Յիսուս իւր աշակերտներով գայ (տ. Աբրահամ): — Մեծ պատրաստութեան մէջ կլինէին հիւրին ընդունելու (նկարագրել թէ ինչ կանէին) և ինչ կարծիք, որ ոչինչ չէին խնայի մեծ հիւրին պատուելու համար: Արդեօք բացի անհանգստութիւնից և պատրաստած կերակրից ուրիշ ոչնչով չէին կարող փրկչին ուրախութիւն պատճառել: — Եթէ լսեն նրա խօսքերը և երկ. արք. մասին հարցնեն: Այժմ տեսնենք, թէ որքան ճիշտ է մեր ենթադրածը:

II.

Աւանդ ել նոր նիւթը (Պուկ. Ժ. 38—42):

Ի՞նչ են անում քոյլերը և ինչպիսի անձնաւսրութիւններ են զրանք: Մարթան դադար չունի և շարունակ աշխատում է. մի տեղից միւսն է շտապում—խոհանոցից մառան, մառանից սենեակ. ափսէներ, պնակներ, կերակուրներ և այլն: Նա գործունեալ է, աշխատասէր, աշխոյժ—կարձ՝ յաւ տանտիկին: Նա ուշագիր է դէպի հիւրը. կամենում է նրան պատուել, սիրում, յարգում է նրան:

Մարթան նստած է Յիսուսի ոտների մօտ. լսում է նրան. հիացած է նրա երկնային խօսքերի վրայ. նա կարօտ է ուսանելու. ծարաւի, սոված է արդարութեան և յաւիտենական կեանքի համար: Նա հաւատ ունի, բարեպաշտ է—կարձ հաւատարիմ աշակերտուհի է մեծ վարդապետին:

Մարթաի խօսքերը նկատողութիւն չպիտի համարել, որովհետեւ եթէ Յիսուսին պատուելը նրա համար ծանրութիւն էր, ուրեմն նա չէ սիրում տիրոջը և մինչեւ անգամ անքաղաքավարութիւն կլինէր նրա կողմից հիւրին մի այլպիսի նկատողութիւն անելու: Այս խօսքերը վկայում են, թէ որքան սերտ և մօտիկ բարեկամ է եղել Ղաղարոսի քոյլերին, որ այդպիսի ընտանեկան խօսակցութիւն է եղել նրանց մէջ: Յիսուս ևս նոյնպիսի բարեկամական արտայայտութիւնով արդարացնում է ասելով—դու հոգս ես անում և շատ բաներով ես զբաղուած, ցամաք հաց և հասարակ ջուրն էլ ինձ բաւական է. Մարիամի բարեպաշտ վարմունքն աւելի կարեւոր է—ահա այդ է իմ ամենամեծ բաւականութիւնն ու ուրախութիւնը. դրա համար էլ նա բարի մասն ընտրեց, այսինքն իմ խօսքերը հաւատարմութեամբ պահել սրտում («երանի այնոցիկ որ լսեն զբանն Աստուծոյ եւ առնեն»): Այս ձգտումը դէպի երկնայինը երբէք չի կորչում, յաւիտենական է, շարունակ աճող գանձ է, որն այս կեանքում մարդու բաղդաւոր է դարձնում, իսկ հանգերձեալում՝ երանելի: Աւելմն Յիսուս Մարթաին հասկացնում է, որ նրա ընտրած մասը վահանակ է: — Ոչ: Այն ինչ որ փրկչին պատուելու և յարգելու համար է, վատ չի կարելի անուանել: Յիսուս ուզում է ասել, եթէ դու ոչինչ միջոց չգիտէիր ինձ ուրախութիւն պատճառելու բացի այս արտաքին յարդանքից, սրանով հեշտութեամբ կարող էիր դլիսաւորը մոռանալ: Դու կարող էիր այն մարդկանց պատկանել, որոնք երկրային պարապմունքների ետե-

ւից ընկնելով, երկնայինը մոռանում են (տ. հ.—ո. § 37): Դու չնչին բաների ետևից ընկնելով՝ կարող է իր այն մի բառ ն ը, որ անհրաժեշտ է, մոռանալ—սրտով անձնատուր լինել ինձ և Աստուծուն: Ես անկասկած եմ, որ քո այդքան նեղութիւններն ի պատիւ իմ է. քեզ շարժողը մի հաւատարիմ սիրտ է, բայց քրոջդ բարեպաշտ սիրտը. որ ի սէր իմ ամենայն ինչ մոռացել է, նոյնպէս սիրելի է ինձ. քո սրտի համար այսօր աշխատութեան օր է, իսկ Մարիամի համար՝ օր հանգստութեան (շաբաթ):

Այսպէս փրկիչը զիտէ ամենաչնչին իրողութիւններից մեծ և խոր մտքեր մակաբերել: Յիսուս ամենուրեք երկնային մըտքեր է գտնում, անգամ պնակ, ափսէ տանելիս և ոտների մօանստելիս:

Համար իսմբ ել—երկու քոյրերի համոզումն և Յիսուսի վճիռն այդ մասին:

III ա.

Մարիամին և Մարթային միմեանց հետ համեմատելով՝ կտեսնենք որ երկուսն էլ տիրոջը սիրում են, սակայն արտայալութեան ձևը զանազան է (ներքին, բարեպաշտ հպատակաւութիւն—աշխատութիւն): Թէ մինը և թէ միւսը, ինչպէս առաջ, նոյնպէս և յետոյ Յիսուսին նմանապիսի սիրով ծառայած կլինէին: Երկուսի վարմունքն էլ գովելի է, սակայն երկուսն էլ թերի են՝ մինը միւսին պէտք է լրացնէ—աշխաերկուսն պիտի կազմեն: Բոլոր բարի մայրերը և կանայք, այլ և շատ աղջկերք և տղայք նման են երկու քոյրերին, որովհետև նրանք ևս իրանց սէրը դէպի Աստուած և մարդիկ, մանաւանդ դէպի իւրայինները, զանազան ձևով են արտայալում: Այն մայրը գովելի է, որը Մարթայի աշխատասիրութեան հետ և Մարիամի բարեպաշտութիւնն ունի և ամեն մինը իւրժամանակին գործ է դնում—աղօթում է, որպէսզի ժիր կերժամանակին գործ է դնում—աղօթում է, որպէսզի ժիրժամանակին աղօթել կարողանալ. աշխատում է, որպէսզի բարեպով աշխատել կարողանալ: Այդ տեսակ մայրերն իրանց պաշտ ձևով աղօթել կարողանալ: Այդ տեսակ մայրերն իրանց սէրն արտայալում են երեմն ջերմեռանդ աղօթելով, որ երեմն էլ ժիր աշխատելով, որովհետև այն աշխատանքը, որ երեմն էլ ժիր աշխատելով, որովհետև այն աշխատանքը, որ Աստուծու անունով է կատարում, նոյնպէս աղօթք է, իսկ

աղօթելը գեղեցիկ աշխատանք է, որ սրտին է պատկանում:

III. բ.

Յիսուսն ասում է—մ ի բառ ն է ալ է տք: Ճատերը տարբեր կարծիքներ ունին—քանի քանի մարդկի անթիւ անհրաժեշտ հոգսեր և զբաղմունքներ ունին (սնունդ, հանդերձ, հարատութիւն, շատ բան գիտնալ...): Ո՞վ է նրանցից իրաւացին:—Սաները հարցը մասնաւորում են և ապացուցանում, որ բոլորն էլ կարեւոր և մարդոց բաւականութիւն պատճառող միջոցներ են, բայց մի բան (հոգս) կայ, որ մարդոց իսկական հոգացողութեան առարկան պէտք է լինէր—ամեն մի հոգս պիտի ուղղուած լինի դէպի երանութիւն, ամեն մի հոգս բարեպաշտ կենցաղավարութիւն պիտի ծնէ:

IV.

Աղօթել և աշխատել:

Ղուկ, ժ. 24. «Բայց աստ սակաւ ինչ պիտոյ է»: Կը կնել—«Խնդրել նախ զարքայութիւն...»:

V.

Ի՞նչպէս կարող ես դու, հէնց այժմ, Մարիամին և Մարթային նմանել (օրիորդներին շատ յարմար է այս հարցը, ինչպէս և առհասարակ ամբողջ պատմութիւնը):—Գործել և մտածել՝ տանը, դպրոցում և եկեղեցում: Ապագայում ինչպէս կարող էք երկուսին էլ նմանել:—Բարեպաշտութեամբ լսել Աստուծու խօսքը, սիրով աղօթել և աշխատել Յիսուսի համար: Ագարակի գանձի և մարգարտի առակն ինչ կապ ունի այս պատմութեան հետ: Ո՞րն է գանձը:—Առողջութիւնն ամենամեծ հարստութիւնն է:

Մեկնել և վարժել—Սաղմ. հք. 25. 26. «Զինչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ի քէն զինչ եւս խնդրեցից յերկիլ: Նուազեաց սիրտ իմ եւ մարմին իմ, Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յափիտեան:» Թ. ա. Փիլ. բ. 12. «Այսուհետեւ սիրելիք իմ որպէս յամենայնի հնազանդեցարուք, միայն ի գալստեան իմում, այլ առաւել եւս այժմ, յորժամ հեռի եմ ի ձէնջ, ահիւ եւ դողութեամբ զանձանց փրկութիւն գործիցէք:»

Վարժութեան—«Մի սիրեք զաշխարհս...»: «Մի գանձէք ձեզ գանձու...»: «Մի հոգայք եւ մի ասիցէք...»:

«Ոչ միայն հացիւ կեցցէ....»: «Երանի, որ լսեն զբանն Աստուծոյ....»:

§ 47

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Նպատակ: Յիսուս իւր բարեկամի գերեզմանի վրայ:

I.

Ո՞վ պէտք է լինի այս բարեկամը: Յիսուսի բարեկամուշիներին ճանաչում ենք—Մարիամ և Մարթա, որոնք նրան սիրում եւ հաւատում էին: Երեխ այս բարեկամն էլ սրտով նրանց նման է եղել, ապա թէ ոչ Յիսուս նրան չէր սիրի: Սա դէմքով ևս նման էր նրանց, որովհետև Մարիամի և Մարթայի եղբայրն էր՝ անունը Ղազարոս: Ափանս որ սուրբ գրքի մէջ նրա մասին ոչինչ չէ պատմած, նրա պատմութիւնը նրա մահուն է սկսում: Յիսուս կանգնած է նրա գերեզմանի վրայ. նա թողեց որ իւր բարեկամը մեռնէ և որքան հեշտութեամբ կարող էր բժշկել նրան: Այս վարմունքը փոքր ինչ զարմանալու էլ է: Ինչո՞ւ նա այդպէս արաւ: Գուցէ տեղեկութիւն չունէր իւր բարեկամի հիւանդութեան մասին:—Ոչ, այդ նրան յայտնի էր: Գուցէ իւր բարեկամի հիւանդութիւնն Աստուծու փառքը յայտնելու համար էր (տ. հ—ո. § 37): Այստեղ հարցը նրանում չէ, որ իսկական պատասխանը դտնենք, այլ՝ սաների ուշադրութիւնը լարենք և սպասող տրամադրութեան մէջ դնենք: Ի՞նչ կանէ Յիսուս իւր բարեկամի գերեզմանի վրայ (լաց, աղօթք, այստեղ կարելի է խօսել ալբրում փորուած գերեզմանների մասին *): Ի՞նչ կանէին Յիսուսի աշակերտները և սգաւոր քոյլերը:

*) Եբրայեցիք սիրում էին ընտանեկան գերեզման ունենալ, ուր թաղած լինէին ծնողները որդւոց հետ: Նախնիների թաղուած տեղը սուրբ էր նրանց համար և անձեռնմխելի: Պատիւ էր համարւում, երբ մինը իւր ժառանգական գերեզմանատանը օտարականի մինին թոց էր տալիս թաղուիլ: Նոքա, որոնք կարողութիւն չունէին սեպհական գերեզմանատուն ունենալու կամ դրսից եկած ուխտաւորներ էին, այդպիսիների համար հասարակաց գերեզմանատուն էր որոշուած (Մտթ. իէ. 7): Օտար գերեզմաններն ես, ըստ բարեպահատութեան, նոյնքան յարգուած էին, ինչպէս և սեպհականները:

II. ա.

Աւանդել նոր նիւթը: (Յովհ. ժա. 1—45.): Դասաւորել նիւթը—Ղազարոսի մահուան լուրը հասնում է Յիսուսին. նա դիտմամբ ուշանում է. զալիս է Բեթանիա և խօսում է Մարթայի հետ յարութեան մասին. խօսում է Մարիամի հետ և արտասում է Ղազարոսի վրայ. աղօթում է և յարութիւն տալիս Ղազարոսին:

Քրքը նիւթը—քոյլերի գոյժից իմանում ենք, թէ որ աստիճան Յիսուս սիրում էր իւր բարեկամին և թէ քոյլերն ինչպիսի մեծ հաւատ ունէին դէպի Յիսուս, որ նա իրանց եղբօրը կբժշկէ առանց որևէ խնդրքի: Յիսուսի պատասխանը «այս հիւանդութիւն չէ ի մահ....» աշակերտներն այնպէս են հասկանում, թէ Յիսուս ուզում է նրա բժշկութիւնը և սրանով իւր փառաւորուելը մարգարէանալ: Սակայն Յիսուսի միտքն ուրիշ էր—նա ուզում էր հասկացնել—թէև հիւանդութիւնը

Գերեզմանների դիրքը և ձեր Պաղեստինէի մէջ այնպէս չէր, ինչպէս մեզ մօտ — մենք փորում ենք գետինը դագաղի մեծութեամբ, դիակը մէջը դնում և ծածկում հողով: Այս ձեր գերեզմաններ հագուագիւտ էին և եղածներն էլ անպատութիւն էր համարւում: Սովորական թաղումն այսպէս էր—դիակը դնում էին նաշի վրայ և տանում տեղաւորում ստորերկրեաց մի սենեկի մէջ, այնպէս որ դագաղի կարեւորութիւն չկար այլքս: Սուրբ գրքի մէջ յիշուած գերեզմանները պիտի հասկանալ բնական կամ արհեստական շինած ծերպեր, այրեր, գբեր: Սկզբում լեռնոտ տեղերի բնակիչները բնական այրերն էին գործ դնում գերեզմանների համար և Պաղեստինէն բաւական հարուստ է այրերով: Դրանք պաշտպանուած էին գագանների չափշտակութիւնից: Այսպէս նորերում քրիստոնեայ ճանապարհորդները, որոց թույացարուած էր Քերքոնի մզկիթը մտնել և ուր գտնվում են նահապետների գերեզմանները, գտել են մի մեծ և բնական կրկին այր:

Բնական այրի մէջ եղած գերեզմանը կամ հողի մէջ փորածը, ծածկում էին քարով կամ աղիւսով, որպիսին ցօրս սովորութիւն է Եգիպտոսում, մօտաւորապէս այնպէս, ինչպէս մեզ մօտ ընդունուած է թաղած տալ, եթէ արձան պիտի կանգնել: Պաղեստինէի գետինը դիւրութիւն էր ընծայում մարդոց փորած գերեզման ունենալ՝ քան թէ քարից, աղիւսոց պատրաստել, դրա համար էլ վերջինները շատ հագուագիւտ են: Ջատ գերեզմաններ փորուած են գետնի մէջ ուղղահայեաց ձեռով, վրան մի քար դրուած ու հողով ծածկած, որի վրայ մարդիկ անց ու դարձ են անում, առանց գիտնալու թէ գերեզման կայ տակը:

Ղաղարոսին մահ կպատճառէ, բայց նա (Հիւանդութիւնը) այնքան զօրաւոր չէ, որ Ղաղարոսը մեռած մնայ, որովհետև ես պէտք է նրան յարութիւն տամ և այսպէս Աստուծու փառքը յայտնի անեմ ամենին:

Չնայելով գեսպանների խնդրին՝ Յիսուս երկու օր մնաց ուր որ էր: Թէև այս այսպէս է, բայց և այնպէս նա Մարթավին, Մարիամին և Ղաղարոսին սիրում էր: Յիսուս զիտէ որ խեղճ քոլբերը անհամբեր իրան են սպասում, որ Ղաղարոսը ծանր հիւանդ է (այդ ժամում արդէն մեռած էր): Ոչինչ չի ասուած, թէ ինչ կարևոր գործ ունէր՝ ուր որ մնայ: Այսքանն է միայն յայտնի, որ նա քոլբերին սիրում էր և նեղութեան մէջ թողեց: Ի՞նչու: — Յիսուս կամենում է կարիքը և՛ս աւելի զօրացնել և դրանով քոլբերի հաւատը փորձութեան տակ դընել: Վերջապէս գալիս է Բեթանիա՝ յայտնելով աշակերտներին, որ ննջած բարեկամին դարթեցնելու է գնում: Աշակերտ-

Մի կողմից մարդկացին սրտի բարեպաշտութիւնն առ հասարակ, միւս կողմից սիրելիների և նշանաւոր անձանց սէրն ու յարգանքը մասնաւորապէս, առիթ եղան ննջեցեալների համար պատուաւոր տեղ որոշելու և նրանց յիշատակը ժամանափի աւերիչ ճիրաններից ազատելու: Սրա համար ևս գերեզմանները սադարթաւէտ ծառերի հովանեների տակն էին որոշում — կամ պարտէզներում: Որովհետև գերեզմանների աւերելը պղծութիւն էր համարում, ուստի արտաքուստ մի նշանով որոշեցին գերեզմանի տեղը, այնպէս որ նաբիլոնի գերութիւնից յետոյ՝ այն գերեզմանները, որոնք հնութիւնից այլ ևս չէին որոշում, կրախառն ջրով սպիտակացնում էին (Մտթ. իգ. 27), որպէսզի անցնողները ոտնահար չանեն, Առողջապահական տեսակի, տը հներին ևս ստիպել է գերեզմանները քաղաքից, գիւղից դուրս ընտրելու: Այդ տեսակ գերեզմանների մէջ երբեմն բնակում էին պղծուած մարդիկ, որպիսին սովորաբար դեերի համար էր որոշուած ընդունել, (թերեւ մեռելների հետ խօսելու նպատակով՝ համաձայն ժողովրդի նախապաշարման: տ. Եսայի ը. 19 իթ. 4.): Եթէ բնակութիւնը խիտ էր, գերեզմանները քաղաքից դուրս էին որոշում (Դուկ. ե. 12): Այսպէս բնակիչներով հարուստ քաղաքների շրջակացքը ծածկում էին գերեզմաններով՝ մասսամբ անյատ՝ գետնի տակ, ինչպէս հոռմէական գետնափորներն (կատակոմբ) էին, իսկ մասսամբ՝ յայտնի՝ գետնի մակերեւոյթից բարձր: Նշանաւոր անձնաւորութեանց գերեզմանները պղծութիւնից գերծ պահելու համար, քաղաքների մէջն էին ինչպէս Սամուէլինը Արմաթեմում, թագաւորների գերեզմանները Երուսաղէմում: Ժամանակի ընթացքում գերեզմանները արտա-

ները սովորական քուն էին հասկանում, իսկ Յիսուս՝ մահու քուն: Փրկիչը երկար ժամանակ չվարագութիւն այս տխուր ճշշմարտութիւնը և շուտով յայտնեց աշակերտներին պարզ կերպով: Ի՞նչպէս կտխրէին աշակերտները: Յիսուս ուրախ է այդ մասին: Այս և ուրախութիւն, այս ինչ տեսակ սէր է: Յիսուս այսպէս է մտածում — բարեկամի մահը դժբաղդութիւն չէ: Ղաղարոսը յարութիւն կառնէ: Այդ դժբաղդութիւն չէ այլ քոլբերի և իւր աշակերտների համար, որովհետև նրանք շուտով իրանց կորցրածը կգտնեն. այլ այդ մահը մի տեսակ բաղդաւորութիւն է ամենի համար — նրանց հաւատը դէպի վրկիչը և՛ս աւելի պէտք է ամրապնդուի:

Գառնանք Բէթանիա՝ տեսնելու թէ այնտեղ ինչ կայ: Ղաղարոսն արդէն չորս օր է ինչ որ գերեզմանումն է (գեսպանների գնացած օրը մեռաւ և հրէից սովորութեան համաձայն մեռած օրն էլ թաղուեց. երկու օր սպասեց, մի օր էլ ճանա-

քուստ գարդարուեցան. հարուստներն երբեմն իրանց գանձի հետ էին թաղում: Եթէ հաւատանք Յովսէփոսին, չերովիչը Երուսաղէմի թագաւորների գերեզմաններից շատ թանկագին իրեր հանեց, բայց ոչ դրամ, որովհետեւ. իւր նախորդը՝ չիւր կան ոսը 3,000 արծաթգաղանդ արդէն հանել էր: Յեթանոսական սովորութեան համաձայն ազնուատոնձ իրացէլացիները ևս գերեզմանի մէջ սուր էին դնում մեռեալի գլխի տակ: Որովհետև երկրի մէջ բորենիները շատ կացին և դիակները զողանում էին, ուստի և գերեզմանները պաշտպանում էին՝ կողպում էին փականքներով, նիկերով (Մտթ. իէ. 60. «Եւ թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ...»): Պաղեստինէում ճանապարհորդները մանրամասն նկարագրութիւններ են ընծացում գերեզմանների տեսակներին, որոնք մնացորդներ են շատ հին ժամանակների: Զորս տեսակ գերեզմաններ են որոշում — ա, ուղաց այս եաց գետնափոր սանդուխտներով իջնում է ստորերկրեաց խուցը, ուր փորուած է գերեզմանն ուղղահայեց ձեռվ, մեր գերեզմանների նման. բերանին դրած է լինում մի սալաքար որպէս խուփ: բ. հ ո ր ի զ ո ն ա կ ա ն — մուտքը քառակուսի, ըստ մեծի մասին հորիզոնական ձեռվ — ժայռը փորում էին կամ պարիսպ շինում, այնպէս ինչպէս՝ պատի մէջ շինած պահարան. յատակը (յաճախ աղեղնաձե), որի մէջն և դնում էին դիակը և ներս հրում, շատ հաւանական է ոտներն առաջ. գ. ն ս տ ա ր ա ն ա ւ ո ր — մի կամարածե փորուացք, որի պատերից մինի վրայ նստարանի ձեռվ ժայռը փորած

*) Տես պատկեր III. ա. և բ.


պարհ եկան): Վոյլբեն անմիջամբ տրտում են անդառնալի կորստի համար: Մխիթարութեան համար եկող հրէաները հազիւ թէ կարողանալին նրանց սիրտն սփոփել: ճշմարիտ միսիթարութիւնը իրանց միակ բարեկամից՝ Յիսուսից էին սպասում: Ո՞րքան յաճախ յիշելիս կլինէին—ախ, երանի թէ նա դար: Արդեօք նա մեզ բոլորովին մոռացել է, թէ....:

Եւ նա դալիս է: Մարթան առաջինն է իմանում, ընդառաջում է և փղձկում է նրա առաջ իւր լցուած սիրտը: Նրա խուզերի մէջ մի տեսակ փափուկ դժգոհութիւն (ինչո՞ւ չեկար, չէ որ մենք քեզ խնդրեցինք) և հաւատ կայ (դու կարող էիր օգնել, այժմս էլ կարող ես, եթէ քո հօրը խնդրես): Յիսուսը խոստմամբ փարձադրում է նրա հաւատը—քո եղբայրը յարութիւն կառնէ: Մարթան, որի հաւատը տատանման մէջ է, վերջին յարութիւնն է հասկանում: Յիսուս նրա տատանուող հաւատը զօրացնում է՝ ասելով—իմ մէջ մի զօրութիւն կայ, ումը կամենամ, շունչ և հոգի կտամ. մահը ևս նրան չի կարող յաղթահարել. դրա համար բաւական է, որ այն ոգին ինձ հաւատայ—Ղազարոսն ինձ հաւատացել է, ուրեմն նա մեռած է, այլ՝ կենդանի: Մարթան հաւատում է, որ Յիսուս, որպէս


էր լինում և նրա վրայ տանում նստացնում էին դիակը: Դ, տաշտաձ և *) որոնք փորուած են ժայռի մէջ դիակի մեծութեամբ:

Կողպելու վերաբերութեամբ գերեզմանները երեք կարգի են բաժանում—1. մակերեսովցիթը գետնի հետ հաւասար է. վրան մի սալաքար դրած—ուղահայեաց գերեզման: 2. մի սենեակ, որի շուրջը դրած են շատ քարէ նստարաններ կամ աթոռներ, որոց վրայ դիակներն էին դնում—նստարաններ կամ աթոռներ և կամ սենեակի պատերի մէջ զանազան հորիզոնական գերեզմաններ և դրանը մի սալ դրած: Ուրեմն իսօնքով կրկնած՝ մի մատուռ է, որի մէջ շատ գերեզմաններ՝ կան: Մատուռի գուռը մի սալով ծածկում էին: 3. մեծ դարպաս, եռանկիւնի ճակատով: Դրանից յետոյ մանր գուներով կարելի է մտնել փոքրիկ խուցեր (երկրորդ տեսակի գերեզման): Սուրբ գրքի մէջ գերեզմանների տեսակները պարզ չէ որոշուած, այլ ընդհանուր խօսքերով են յիշատակուում, ուստի և ճանապարհորդների հաղորդած տեղեկութիւնները գեղեցիկ բացատրութիւններ են, որոնք լուսաբանում են սուրբ գրքի այս կամ այն աղօտ կէտերը գերեզմանների վերաբերութեամբ:


*) Տես պատկեր III. 1. և 2.



1. Մարգարէների գերեզմաններ



2. Դատաւորների գերեզմաններ



ա. Բայ գերեզման

բ. Կողպած գերեզման

երկնաւոր հօր որդի, ումը կամենայ, կարող է յաւիտենական կեանք պարզեցել, բայց հետը միասին կասէր իւր սրտում — այս, դա մի գեղեցիկ բան կլինի մեր եղբօր համար, բայց ինչ օգուտ մեզ՝ անմխիթար, աղքատ և թշուառ քոյրերիս, մեր եղբօր երկնաւոր կեանքն աւելի օգտաէտ կլինէր մեզ համար:

Յիսուս Մարիամին գիւղից կանչել է տալիս (Մարթան ծածուկ է յայտնում, որպէսզի մխիթարութեան եկող հրէաներն էլ հետները չգան): Մարիամն ուրախ սրտով շտապում է նրա առաջ, որն իսկապէս կարող էր մխիթարել, լալով ոտներն է ընկնում. յայտնում է իւր վիշտը, հաւատը և մխիթարութիւն խնդրում: Միւնոյն մտքերն է արտայատում, ինչ որ քոյրը (երեխ եղբօր մահուանից յետոյ սովորական խօսակցութեան առարկայ են եղել վշտալի քոյրերի մէջ այդ մտքերը): Մարիամի վիշտը և արցունքները շարժում են փրկչին — նա արտասուում է: Ղազարոսի համար չէ տիրած, որի մօտագայ յարութիւնը նա գիտէր, այլ՝ նրա համար որ մահը իրան սիրելի մարդկանցից (կամ առահասարակ) խլում է նրանց սիրելին, առանց յաւիտենական կեանքի մխիթարութիւնը տալու:

Յիսուս գնում է գերեզմանի մօտ և հրամայում է քարը վերցնել: Մարթան ցիշեցնում է նրան, որ մարմինն արդէն հոտած կլինի, ուրեմն և ամենայն ինչ ի զուր է: Դրանով նա կրկին անգամ մատնում է իրան, որ իւր հաւատը փոքրացել է և դրա փոխարէն կասկածն է ներս մտնել: Յիսուս նախատում է նրան այս առթիւ, կցելով իւր յորդորը, եթէ հաստատ հաւատ ունենայ, Աստուծու փառքը կտեսնէ: Երբ գերեզմանը բաց են անում, գոհանում է Յիսուս, հաստատ համոզուած, որ կլոէ իրան իւր հալը և այս անգամ ևս կուղարկէ իւր օգնութիւնը (նա բարձր ձախով է գոհանում, որպէսզի իւր շրջապատողները լսեն թէ նա Աստուծու հետ է խօսում, թէ Աստուծած նրան լսում է և հաւատան, որ Աստուծած նրա հալըն է), ուստի և վստահ կերպով կոչում է մեռեալին — «Ղազարէ, արի, եկ արտաքս»: Աստուծու ամենակարողութիւնը, որ Յիսուսի հետն էր, ըստ երևոյթին անկարելի երեկցածը հնարաւոր է դարձնում — մեռեալը լսում է. հնազանդւում, վեր է կենում, ման է գալի. հոգին նորից միացել է հոտած մարմնի հետ. մահը իւր աւարը ստիպուած է յետ տալու. զօրեղը երկրիս վե-

րայի դօրագունին (մարդոց կարծիքով յաղթեց) և Ղազարոս յանձնուեց կեանքին և վշտացեալ քոյրերին: Քոյրերի և աշակերտների հաւատը դէպի Յիսուս զօրանում է. այժմ շատ հրէաներ ևս հաւատացին, որ նազովրեցի Յիսուսը խոստացեալ Մեսսիան է, որովհետեւ ինչ որ նրանք այսօր տեսան, լուսած բան չէր. այս բանն աստուածալին կարողութիւն ունեցողը միայն կարող էր գործել:

II. Բ.

Հ ա մ ա խ մ բ ե լ գլխաւոր մտքերը: Դ ա տ ե լ պատմութեան մէջ գործող անձանց մտածմունքները և գործերը:

III.

Բացի Ղազարոսից Յիսուս երկու ուրիշ մեռեալի ևս կեանք է շնորհել, բայց սա ամենից փառաւորն էր (ապացուց): Յիսուս սրանով յախտնեց իւր իշխանութիւնը մահու վրայ և ցոյց տուաւ, որ մարդոց կեանքն անցաւոր չէ (տ. ն—ո. § 28): Ինչպէս բոլոր հրաշագործութեանց ժամանակ, այսպէս և այստեղ ներկայ եղողների մէջ հաւատ է ծագել (տ. ն—ո. § 29): Ինչո՞ւ:—Սէրը և հաւատը, որ ունէր Ղազարոս դէպի Յիսուս՝ սուածնորդեց նրան դէպի յաւիտենական կեանք. նա սրանով մարդկանց կամեցաւ հասկացնել, թէ ով դէպի Յիսուս հաւատ կունենալ, կապրի, թէկուզ մեռած ևս լինի: Նոյն իսկ դէպի Յիսուս հաւատ ունենալը և սրտանց նրան նուիրուելը՝ կեանք է, որն ալստեղ սկսում է և այնտեղ չէ վերջանում— այդ կեանքը յաւիտենականն է: Միայն հաւատացեալների համար է մահը յաղթուած: Զէնքը, որով մահուան յաղթում ենք հաւատն է. ուր հաւատ չկայ, ուր մարդիկ իրանց սիրտը փոխանակ Քրիստոսին՝ մեղացն են յանձնում, այնտեղ մահը տիրող է, նա սարսափ է թափում ամենուրեք, այնտեղ մարմնի մահանալուցն առաջ հոգին է մահանում: Այն կեանքն է միայն ճշմարիտ, որը Յիսուսի և Աստուծու համար է գործել. այդպիսի կեանքն ընդունակ է յաւիտեան ապրելու, աճելու և զօրանալու: Միայն Յիսուսի ճշմարիտ հետեռողներն են այսպիսի կեանք վարում այսինքն հաւատով. համոզուած են, որ ոչ հոգեկան և ոչ մարմնական մահն իշխանութիւն ունի իրանց վրայ. որ երկրիս վրայ ոչինչ չի կարող նրանց դէպի Յիսուս և Աստուծու առնեցած կեանքին վտանգ սպառնալ և եթէ նրանք

երկրիցս հրաժարական առնելու լինին, նշանակում է փրկչին աւելի են մօտենում. այդպիսեաց երկրաւոր երջանկութիւնը երկնալին երանութեան է փոխուում: Մահու երկիւղը, ուրախութեան վերածելը, երկրային կեանքը երկնալինի վախելը, հոգեկան և մարմնական մահը կեանքի վերածելն Յիսուս աշխարհ բերաւ. միլիօնաւոր մարդիկ հաստատ հաւատ ունենալով դէպի նա, ճշմարիտ կեանք են ձեռք բերել՝ թէ այստեղ և թէ այնտեղ: Եւ եթէ Ղազարոսին յարութիւն տալը նրա երկրաւոր կեանքում կատարած հրաշքների մէջ ամենից փառաւորն է, այն ժամանակ մեղաց և կռապաշտութեան մէջ մահացած մարդկութեան վերածումն դէպի ճշմարիտ կեանք, ևս աւելի փառաւոր և օրհնաբեր հրաշագործութիւն է: Մարդկութիւնը մահու քնից զարթեցնելը նման է ծովի, որի առաջ Ղազարոսի յարութիւնը մի կաթիլ է: (Այս բոլոր մտքերը թանձրացեալ ապացուցների կարօտ են):

IV.

Յովհ. ժա. 25. «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք, որ հաւատայ իմ, թէպէտ եւ մեռանիցի՝ կեցցէ: Եւ ամենայն որ կենդանի է եւ հաւատայ իմ՝ մի մեռցի ՚ի յաւիտեան»:

Թ. ա. Փիլ. ա. 21. «Զի ինձ կեանք Քրիստոս է, եւ մեռանիլ շահ»:

V.

Մենք ինչպէս կարող ենք ճշմարիտ յաւիտենական կեանք ձեռք բերել: Ի՞նչպէս պէտք է ցոյց տանք, որ այստեղ էլ, հանդերձեալումն էլ յաւիտենական կեանքի մէջն ենք: Ի՞նչպէս կարող ենք Յիսուսի բարեկամ լինել: Մեր հաւատը դէպի Յիսուս երբ է աւելի խիստ փորձութեան ենթակայ:—Ամեն մի հիւանդ քրիստոնէի համար կարելի է ասել «այս հիւանդութիւն չէ ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ», նոյնպէս ամեն մի մեռած քրիստոնէի համար, կարելի է ասել «ննջեաց, ապա ապրի» (ապացուց):

Մ ե կ ն ե լ և վ ա ր ժ ե լ—Թ. ա. Փիլ. ա. 23. «Զցանկալն ելանել և ընդ Քրիստոսի լինել, առաւել լաւ համարիմ»: Թ. ա. հոմ. ժդ. 8. «Եթէ կեանք, տեառն կեամք, եւ եթէ մեռանիմք, տեառն մեռանիմք»: Յովհ. ժդ. 6. «Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք, ոչ ոք գալ առ հայր իմ,

եթէ ոչ ինեւ»: Յովհ. ը. 51. «Եթէ ոք զբանն իմ պահեսցէ, զմահ մի տեսցէ ի յակտեան»:

Վարժութիւն—«Երանի մեռելոց որք....»: «Երանի, որոց ոչ իցէ տեսեալ....»: «Եւ այս է յաղթութիւն մեր....»: «Ոչ ամենայն, որ ասէ ցիս տէր....»: «Զի զոր ինչ սերմանէ....»: «Ես եմ լոյս աշխարհի....»: «Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւիլ....»: «Երանի է ձեզ յորժամ նախատիցեն....»: «Զի զոր սիրէ տէր, խրատէ»:

III

§ 48

ՅԻՍՈՒՍԻ ԹՁՆԱՄԻՆԵՐԸ

Նպատակ: Յիսուսի թշնամիները:

I

Յիսուս և թշնամի—այս խօսքերը միմեանց չեն յարմարում: Ինչո՞ւ: Զարմանալի բան—փրկիչը որ ամենուրեք սէր է ցանել (ապացոյց), այժմ թշնամութիւն է հնձում: Բայց և այնպէս իրողութիւն է. մեզ մնում է փնտուել այն հիմքը, որտեղից որ սա յառաջանում է: Ինչպէս ամեն ինչ աշխարհիս մէջ իւր պատճառն ունի, այսպէս և սա: Մենք շատ տեսակ մարդիկ ենք ճանաչում, որոնք Յիսուսին չեն սիրում:

Այդ տեսակ մարդկանցից առաջինը Փարթէյին էին: Ի՞նչպիսի յարաբերութիւն ունէր փրկիչը սրանց հետ: Փարիսեցիները խստիւ պահանջում էին շաբաթ օրերը ոչինչ չգործել: Յիսուս ընդհակառակն քարոզում էր դրա դէմ և մինչեւ անդամ իրան շաբաթի տէր էր անուանում: Յիսուս մեծ նշանակութիւն չէր տալիս փարիսեցիների պաշտպանած օրէնքներին, լրացման...., այլ արհամարհում և դառը նկատողութեան էր ենթարկում նրանց շրթունքով կատարած աստուածպաշտութիւնը: Նրանց յաճախակի պահելուն չնչին նշանակութիւն էր տալիս (տ. ն—ո. § 44): Լերան քարոզի մէջ Յիսուս իրան Մովսէսի, որին փարիսեցիք ամենամեծ յարդանքն էին ցոյց տալիս, հակապատկերն է համարում (մասնաւորել): Նա ապա-

ցուցանում է որ օրէնքը լրացնողն ինքն է միայն. պախարակում և ծաղրում է փարիսեցիների կեղծաւորութիւնը ողորմութիւն տալիս, աղօթելիս և պահելիս: Առակի մէջ փարիսեցու պատկերը շատ ստոր է ներկայացնում արհամարհուած մաքսաւորից: Յիսուս յարաբերութիւն չէ անում բարձր դասակարգի մարդկանց հետ, ինչպէս փարիսեցիներն էին պահանջում, այլ ուտում և խմում էր մաքսաւորների և մեղաւորների հետ, աղքատների և ժողովրդի մէջ փոքր համարուած (օրինակ) մարդկանց հետ. նա սիրում էր վաստակեաներին և բեռնաւորներին. Նրան հետեւում է ժողովրդի բազմութիւնը. երանի է տալիս աղքատներին և երկնից արքայութեան աւելի մօտիկ անձնաւորութիւններ է համարում:

Ի՞նչ կարծիք, որ այս վարմունքը դուր չէր դայ փարիսեցիներին: Փոխանակ զղալու և ապաշխարելու նախանձում են — նա մեղնից իմաստուն է և զօրաւոր. մեզնից հմուտ է քարոզում. ժողովութիւնը նրան բարեպաշտ, սուրբ է համարում. մեզնից աւելի պատիւ, սէր և յարգանք ունի ժողովրդի մօտ. նա փայլում է և սրանով մեր լրսը նսեմացնում: Նախանձից ծագում է երկիւղ—նա մեզ ներկայացնում է ժողովրդի առաջ որպէս մեղաւորներ և կեղծաւորներ, որով մեր նշանակութիւնը բոլորովին վայր է ձգում, որովհետև ժողովուրդն այն ժամանակ կամ է կհետևէ մեզ, երբ կտեսնէ որ մենք ենք ամենից բարեպաշտը, արդարը: Դրա համար ևս (փարիսեցիների կարծիքով) մարգարէն հասարակ ժողովրդի սիրտն է զրաւում, գովում, փառարանում և բժշկում է նրանց. շաղքութում է, որպէսզի մեր դէմ ապստամբութիւն յարուցանէ և այդ բանը նրան շատ հեշտութեամբ կիշջողէ, եթէ այսպէս շարունակէ:

Երկիւղից ծագում է առելութիւն—նա Աստուծու մարդարէ չէ, վասնզի Մովսէսի սուրբ օրէնքները կամենում է լուծել. իւր օրէնքները Մովսէսինի հակապատկեր է համարում. վասնանում է մինչև անդամ մեղաց թողութիւն շնորհել, որ Աստուծած միայն կարող է. արհամարհում է սրբազան արարողութիւնները, նոյնպէս և մեր պաշտպանութիւնն այդ առթիւ: Եթէ այս արտաքին տեսանելի բարեպաշտութիւնները ոչինչ գառնան, այն ժամանակ մեր փառքը և պատիւը ժողովրդի առքում կորած է. ամեն մի քայլափոխում կշտամբում է մեզ

որպէս կեղծաւորներ, մեղաւորներ, անմիտներ—այդ բոլորն սուտ է, զրաբարտութիւն է, պէտք է արդարութիւն պահանջել: Նա մեր իշխանութիւնն ուզում է տապալել և ինքը նստել մեր աթոռի վրայ, ուստի ամեն միջոց պիտի գործ դնել կործանելու նրան—կարճ՝ կամ նա կամ մենք:

Դպիլութը ևս չեն սիրում Յիսուսին, որովհետև նրանք էլ սովորաբար փարիսեցիների հետ են նախատուում: Սրանք ևս զրի տառերին են հետեւում: Եթէ Յիսուսի քարոզութիւնը երկրի մէջ տարածուի և նշանակութիւն ստանալ, նրանք ևս կընկնեն:

Քահանայի և զետոյին նոյնպէս վիրաւորուած են Յիսուսից, (տ. ողորմած սամարացու առակը:) «Իրանք ասում են, եթէ Յիսուսի խօսքը, թէ «Աստուած Հոգի է....» (տ. ն—ո. § 45) Յիսուսի խօսքը, թէ ամամակ տաճարը և այնտեղ կատարուած ծէ-ընդունուի, այն ժամանակ տաճարը և այնտեղ կատարուած մերը (զոհաբերութիւն...) կորցնում են իրանց նշանակութիւնը (Յիսուս իրան տաճարից մեծ անուանեց). այն ժամանակ մեր պաշտօնը, մեր եկամուտը և նշանակութիւնը կործած է, ուրեմն ոչինչ չպիտի խնայել նրան կործանելու համար:

Փրկչի այս թշնամիները որտեղ էին բնակուում:—Գալիի-այում ևս փարիսեցիներ.... կային, բայց մեծ մասամբ կենում էին Երուսաղէմում, նրա շրջակայքում և մեծ ազդեցութիւն ունէին ժողովրդի վրայ, դրա համար էլ փրկիչը իրան համար գործնէութեան ասպարէզ՝ ըստ մեծի մասին Գալիլիան ընտրեց. միայն դիսաւոր տօներին (պասէք....) դնում էր Երուսաղէմ և ամեն անդամ էլ թշնամիների հետ մեծ վիճաբանութիւն էր ունենում (Բեթհեղդա): ի ծնէ կոլը):

Հակառակորդներն ինչպէս էին իրանց թշնամութիւնն արտաքայտում: Փարիսեցիներն և դպիլութը դարանակալ էին լինում և փնտուում էին, որ նրա բերնից մի սխալ խօսք լսեն, որպէսզի գանգատի հիմք ունենան (տ. Պուկ. ժա. 54). հազար ու մի պատրուակներով հարցեր էին առաջարկում՝ նրանից մի անզգուշ պատասխան լսելու համար (տ. Պուկ. ժա. 17.), բայց նա ամենին էլ ափի ի բերան էր առնում կտրուկ և տեղին յարմար պատասխաներով (Պուկ. ժա. 17): Նրանք ևս աւելի բարկանում և աշխատում էին մի ձեռով սխալացնել (Պուկ. ժ. 11. Մտթ. ժբ. 14. տ. մանաւանդ գոսացեալ ձեռքի:

Բեթեղդալի հիւանդի և կոլը ծնածի բժշկութիւնը: Այստեղ ժողովրդանոցի կառավարութիւնը վճռում է մինչև անդամ Յիսուսի կողմանակիցներին յախնի կերպով Յ0 օր ժողովրդանոցից արձակել):

Հասլա լսեցէք, տեսնենք Յիսուսի թշնամիներն ինչ են անում նրան վնասելու, վայր ձգելու համար:

II

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱՅ

Թշնամիները նշան են պահանջում:

Աւանդել նոր նիւթը (Մտթ. ժբ. տ. Պուկ. ժա): Կուտուրական—պատմական—աշաճախ սագուգեցիները փարիսեցիների հետ միասին են լիշտում (արդէն Յովհաննէսը երկուսին էլ իժի ծնունդներ անուանեց): Սրանք հանգերձեալ կեանք, յարութիւն մեռելոց չէին ընդունում (Մտթ. իբ. 23). ոչինչ նշանակութիւն չէին տալիս փարիսեցիների «յաւելուած» ներին և ապրում էին առակի հարսուի նման. նախանձում էին, որ Յիսուս աղքատ ժողովրդին սիրում էր և հակառակ, էր հարուստներին (տ. ն—ո. § 25):

Քրքրել նիւթը: Փարիսեցիները և սագուգեցիները պահանջում են, որ Յիսուս երկնքից մի նշան ցոյց տայ (զորովինակ ինչպէս Եղիան), որովհետև ցարդ գործած հրաշքները բաւական չեն համարում նրան Մեսսիա ընդունելու: Փարիսեցիներն այսպէս են մտածում—Յիսուս նշան չէ կարող ցոյց տալ, դրա համար փորձ էլ չի անի, այն ժամանակն իշարկ է մենք նրան կծաղրենք ժողովրդի առաջ և կամ եթէ փորձի, ևս աւելի ծիծաղելի կդառնայ, այլևս ոչ ոք չի հաւատայ նրան: Իսկ եթէ փորձի և յաջողութիւն գտնի, այն ծամանակ կասենք կախարդանք է, պատիր երեսով, հմայութիւն և ալսպէս նրա նշանակութիւնը վայր կձգենք:

Ինչու Յիսուս նրանց պահանջած նշանը ցոյց չի տալիս: — Յիսուս խկոյն նկատում է նրանց չար միտքը. զիտէ որ գործելու զօրութիւնն ստացել է թերահաւատներին խրախուսելու, հաւատ ունեցողներին վարձատրելու և թշուաւներին մխիթարելու և ոչ ժէ ունայն ձեռով վատնելու ալսպիսիների համար, որոց մէջ հաւատի նշոյլ չկայ:

Բայց և այնպէս ի՞նչ նշան ցոյց կտոր նրանց:—Նրանք պէտք է բաւականանան Յօվնան մարդարէի նշանով (ի կարելոր դէպս կարելի է կարդալ Յօվնան մարդարէի ա. 1. 2. և գ. 1—10). նա ոչինչ նշան ցոյց չտուալ՝ ցոյց տալու իւր Աստուածանից ուղարկուած լինելը: Յիսուս իրաւունք ունէր ասելու—իմ անձնաւորութիւնը, իմ բարեպաշտ կենցաղավարութիւնը, իմ քարոզների ճշմարտութիւնը բաւական պէտք է համարէք հաւատալու, ինչպէս երեմն նինուէացիք, որոնք Յօվնան մարդարէի անձնաւորութիւնը և քարոզը բաւական համարեցին հս ւատալու և զղալու: Նշան հարկաւոր չէ ձեզ, որովհետև դուք ոչ թէ միայն (տ. Ղաղարոսի առակը) «Պովսէս և մարդարէք» ունիք այլ և ինձ ունիք, որի մասին մարդարէները դուշակել են և նա աւելի բարձր է՝ քան թէ Յօվնան և մարդարէք: Դրա համար էլ նինուէացիք և Սաբալի թագուհին (տ. հ—ո. § 65) պէտք է այս չար ազդին դատապարտեն, այսինքն նրանք իրանց ուղիղ վարմունքով պէտք է ապացուցանեն ամենին փարսեցիների չարութիւնը և դատապարտութեան արժանի լինելը: Ուրեմն Յիսուսի վարդապետութեան ճշմարտութիւնը և մաքուր կենցաղավարութիւնը միայն նշան և ապացոյց պիտի համարուի (տ. ն—ո. § 29), որ նա Աստուածանից է ուղարկուած: Այս բոլորն իհարկէ փարիսեցիների համար ոչինչ նշանակութիւն չունէր, որովհետև նրանք ոչ լսել, ոչ տեսնել և ոչ հաւատալ են կամենում, բայց որանով զօնէ նրանց չար դիտաւորութիւնը կմերկանայ և ըստ արժանույն կդատապարտուի: Փարիսեցիները բարկացած դառնում են տուն, որովհետև իրանց տգեղ նախազիծը չկատարուեց, բայց միւնոյն ժամանակ լի նոր բարկութեամբ, նոր վրէժինդրութեամբ, որ Յիսուս իրան Յօվնանից և Սողոմոնից բարձր դասեց:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ.

Դ ե ե ր ի հ ա լ ա ծ ո ւ մ ն Բ ե ե ղ դ ե բ ո ւ ղ ի ձ ե ո ք ո վ:
Ա ւ ա ն դ ե լ նոր նիւթը—(Մտթ. ժք. 22. տ. Մըկ. գ. Ղուկ. ժա.):

Յիշել՝ ինչ որ ուսել են քանանացի կնոջ մասին:
Փարիսեցիների թշնամութիւնը նրտեղ է երեւում:—Նրանք մեղադրում էին Յիսուսին, որ դեերի իշխանի հետ միաբանած՝

վերջինիս տկար հպատակներին հալածում է և այս իշխանութիւնը ձեռք բերելու համար՝ դկերի իշխանին անձնատուր է եղած: Յիսուսի զբարտանքով կամենում էին սատանալին դաշնակից դուրս բերել և ժողովրդի սէրն ու յարդանքը դէպի նա սառեցնել: Յիսուս ասում էր—բաժանումն, անմիաբանութիւնը թլացնում է ամենայն մի տէրութիւն, քաղաք և ընտանիք, ուրեմն սատանան ինձ հետ միաբանելով՝ իւր իշխանութիւնը պէտք է թլացնէ և կործանէ—սա անմիտ մտածողութիւն է: Զեր որդիքը (փարիսեցիների որդւոց մէջ դկեր հալածողներ կալին—տես. Ղուկ. ժա. 54.) ձեր կարծիքով հալածում են դկերին Աստուծու օգնականութեամբ և դրանով ապացուցանում են ձեր մեղադրանքի լիմարութիւնը և անարգութիւնը: Զար ողիներին Աստուծու օգնականութեամբ միայն կարելի է հալածել, ուրեմն ես ևս Աստուծու օգնականութեամբ եմ հալածում, հետևաբար ինձանով և իմ կատարած հրաշքներով Աստուծու արքայութիւնը դէպի ձեզ է եկել և եթէ դուք ինձ ատում էք, միւնոյն է թէ Աստուծու արքայութիւնն էք ատում: Յիսուս փարիսեցիների չար դիտաւորութիւնը (Մըկ. գ. 21. Յով. ժ. 20) ի դերե ելաւ և հրապարակաւ, որպէս ստախօններ խայտառակ եղան:

Կ ու ր տ ու ր ա կ ա ն—պ ա տ մ ա կ ա ն—սատանաներին, չար ողիներին հաւատալ, դկերին հալածել:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ.

Հ ե ր ո վ դ է ս թ ա գ ա ւ ո ր ի թ շ ն ա մ ո ւ թ ի ւ ն ը:

Մի նոր թշնամի է երեւան զալիս: Այս այն անձն է, որ Յիսուսի յառաջընթացին արդէն սպանել տուաւ: Դա Դալիլիալի իշխան չերովդէսն էր: Ի՞նչը պէտք է նրան Յիսուսի թշնամացրած լինի:—Յիսուս ևս ապաշխարութիւն էր քարոզում թէ փոքրին և թէ մեծին ամենի յանցանքն ուղղակի երեսին էր ասում: Երեկի հերթը յանցաւոր թագաւորին է հասել (տ. Յիսուսի խօսքը շնութեան և արձակման մասին—Մտթ. ե. 28 տ. Ղուկ. ժզ. 18): Հերովդէսը ժողովրդից երկիւղ է կրում, ինչպէս Յովհաննիսի ժամանակ, վասնզի Յիսուս մեծ յարդանք ունէր նրանց մէջ:

Ա ւ ա ն դ ե լ ն ո ր ն ի ւ թ ը — (Ղուկ. ժզ. 31—33.):

Աւղին՝ Հերովդէսն ուզում էր Յիսուսին սպանել տալ: Այլ-
ևս ժամանակ չկար՝ միջոց տալու փրկչին, որ վերջինս զու-
րանալ իւր կենաց ապահովութեան մասին. նոյն իսկ իւր իսկանը
բաւական անհանգիստ էր անում իրան՝ Յովհաննիսի արիւնն
անմեղ տեղը թափել տալու համար: Հերովդէսը ձայն ձգել
տուաւ, որպէսզի Յիսուսն զգուշանալ և ինքը հեռանալ իւր
երկրից. փարիսեցիները ևս գիտէին այդ լուրը և հենց այդ հի-
ման վրայ էլ յախում են փրկչին այդ զոյժը: Այրական ան-
վեհերութեամբ պատուիրեց յախոներու թագաւորին—որին իւր
խօրամանկութեան համար աղուէս է անուանում—որ երեք օր
ևս պիտի զործէ Գալիլիայում և թագաւորի բռնութիւնը զործ
դնելուց առաջ նա Գալիլիան թողած և Երուսաղէմ գնացած
կլինի, որովհետեւ անկարելի է, որ մարդարէն Երուսաղէմից
դուրս կորչի: Այս խօսքերով դառն ակնարկութիւն է անում
գէպի մարդարէմասպան զլխաւոր քաղաքը և հեդնում է մարդա-
րէների թշնամի անձանց, բայց միւնոյն ժամանակ փրկչի
միրտը լցում է տխուր մտածունքներով, որ նա այժմ այն
անձնի որդուց պիտի հեռանալ, որի հօրից մանկութեան ժա-
մանակ փախել էր: Պառնութեամբ լի է նրա սիրտը, որովհե-
տեւ ստիպուած է հեռանալ իւր սիրած երկրից, սիրելիներից,
որոց վրայ սիրոյ անժիւ հեղեղներ է թափել. տրտմում է Յի-
սուս, որովհետեւ պիտի գնայ այն քաղաքը, ուր իւր ոխերիմ
թշնամիներն են կենում:

ՅՈՐՈՐԻ ՀԱՏՈՒԱԾ

Բ ա ր ձ ր ա գ ո յ ն ա տ ե ն ի վ ճ ի ռ ը:

Յիսուսի կեանքը վտանգի մէջ է: Միթէ ցարդ պատահած
իրողութիւնները վտանգներ չէին զուշակում նրա կեանքի հա-
մար: Փարիսեցիներն իրանց հարցերով ոչինչ յանցանք չկարո-
ղացան Յիսուսի մէջ զտնել. զանգատի ոչ մի կիմք չզտան.
Ժողովրդի սէրը դէպի նա փարիսեցիները չէին կարող նուազեց-
նել իրանց զրպարտութիւններով: Սպանման նտխագծերը մաս-
նաւոր մարդոց կամ փարիսեցիների կողմից էին առաջարկում,
որոնք իրաւոնք չունէին մահու վճիռ տալու ում և լիցէ վե-
րաբերմամբ: Ուրեմն վտանգն ում կողմից պիտի լինէր: — Երկրի
(հրէից) բարձրագոյն իշխանութիւնից — բարձր առ դոյն ա-

տ ե ն ի ց (այս ժողովի անդամներն էին — քահանայապետ,
փարիսեցիք և սալուգեցիք): Արանք մինչև այժմ լռել էին
Յիսուսի և նրա գործերի վերաբերութեամբ: Բայց այդ լռու-
թիւնը երկար կտևի արդեօք: Ի՞նչը պէտք է առիթ տայ
նրանց դատաստանի հրաւիրելու փրկչին: Ի՞նչ վճիռ կտան
արդեօք:

Աւանդել նոր նիւթն ըստ Յովհ. ժա. 46—57: (Որովհե-
տեւ մենք նիւթը ժամանակագրական կարգով չենք աւանդում,
ուստի մի քանի կէտեր կարեւոր է լիշել, որպէսզի նախկին և
ապագայ հատուածները կապուին միմեանց հետ): Յիսուս թո-
ղեց Գալիլեան. եկաւ Բեթանիա Պարիսի և Պարթալի մօտ.
այդտեղից անցաւ Յորդանանը (Յովհ. ժ. 40.). Հրաւիրուեց Բե-
թանիա իւր բարեկամ Ղազարսին բժշկելու: Այնուհետև գնաց
Եփրայիմ քաղաքը՝ ոչ հեռու Բեթելից. այնտեղ էլ մնաց մենչեւ
պասէքի տօնը. յետոյ Երեքվի մօտ հանդիպեց Գալիլիայից եկող
ուխտաւորներին. կոլին բժշկեց. դարձաւ Երեքով Զակըքսի
մօտ և վերջն այնտեղից Բեթանիալի վրայով Երուսաղէմ դար-
ձաւ: Ի՞նչն ստիպեց բարձրագոյն ատենին ժողով կազմելու: Ատե-
նի անդամները (փարիսեցիք և սալուգեցիք), նախագահ քա-
հանայապետը երկիւղի մէջ էին Ղազարոսի յարութիւնից յետոյ
— նրանք վախենում էին, որ այս նշանը հշամոզէ ժողովրդին
Յիսուսին խօստացեալ Պիստիա ընդունելու: Եթէ այդ կարծիքը
հաստատուէր, այն ժամանակ ատենի անդամների գոյութիւնը
վտանգի մէջ էր, նրանց դիմակը պէտք է վերցնուէր.... և
հենց դրա համար էլ ամենքը համակարծիք էին Յիսուսի
սպանման հարցում:

Ի՞նչ ընթացք է ստանում դատը: — Հարցը որանումն է,
թէ ի՞նչ պէտք է անել Յիսուսի դէմ: Ժողովրդեան մէծ բազ-
մութիւն է գնում նրա ետևից. ընդունում է նրան (տ. Բեթհեղ-
դալի հիւանդի, ի ծնէ կոյրի բժշկութիւնը): Եթէ մենք հար-
ցին սառն աչքով նայենք և ոչինց չանենք, այն ժամանակ
ժողովուրդը կընդունէ նրան ըրպէս խօստացեալ Պիստիա: Ատենի
անդամներն ի՞նչ պիտի անեն, երբ ժողովրդի ստուար բազմու-
թիւնը նրա կողմն է: Արդեօք իրանք ևս կհաւա-
տան և կճանաչեն նրան որպէս Պեսսուիա: Եթէ
այդ անէին, այն ժամանակ իրանք պէտք է հեղ և խոնարհ

կերպով ստորադրուէին նրան. նրա քարոզութիւնների համաձայն կարգադրէին աստուածպաշտութեան եղանակը չըկաստանի մէջ—կարծ առած՝ իրանց իշխանութիւնն աղքատ հիւսնի որդուն պիտի յանձնէին։ Բայց այս բանը նրանք չէին կամենում. նրանց ատելութիւնը, նախանձը, շահը.... շատ մեծ էր։ Ուրեմն պէտք է թոյլ տալին։ —Այս ժամանակ բոլոր ժողովուրդը նրան կհետեւէր. թագաւորի տեղ կընդունէր (տ. 5000-ի կերակրելը) և փարիսեցիների իշխանութեան դէմ կապստամբուէր—սրանից կյառաջանար քաղաքական պատերազմ և հրռովմայեցիներն իբրև դատաւոր երևան կդալին։ Ժողովուրդը իւր Մեսսիալի հետ կղիմադրէր հռովմայեցւոց, վասնզի Մեսսիան պէտք է հրէից թագաւորութիւնը վերականգնէ, ինչպէս Թաւթի օրերումն էր, այն ժամանակ ձռովմայեցւոց լէդէօնները հանդէս կդան պատերազմի դաշտում, որոց դէմ ոչ մի ոյժ երկրիս վրայ դիմադրել չի կարող։ Յետո՞յ։ Յետոյ երկիրը կապստակեն. անապատ կդարձնեն. Երուսաղէմը կնուածեն և կը քանդեն. ժողովրդին սրախողխող կանեն կամ յաւիտենական դերութեան կմատնեն։ Արդեօք այս ենթագրութիւնը ճիշտ է։ Այդպիսի թագաւորութիւն չէր կամենում Յիսուս վերականգնել—ոչ մի տեղ, ոչ մի խօսք չէ ասել նա ժողովրդին, թէ երկրաւոր թագաւորութիւն է ուզում հաստատել և հրէաներին ազատել հռովմայեցւոց գերիշխանութիւնից. նա շարունակ և ամենուրեք երկնքի թագաւորութեան մասին է խօսել (տ. առակներ). նա քարոզել է մարդոց և դրանով կամեցել է ազատել նրանց մեղաց ստրկութիւնից։ Այս բանը փարիսեցիները կարող էին և պէտք է դիտենալին. թերևս նրանք այս բանը կեղծիք էին համարում իրանց կուրութեան մէջ։

Ժողովի բոլոր անդամները համաձայն էին, որ Յիսուսի դէմ մի վճռական բան պէտք է անել, բայց ոչ ոք չգիտէր թէ ինչ։ Եւ ահա տեղից վեր է կենում քահանայապետը և հարցը որոշ է զնում—լաւ է մի նը մեռնէ, քան թէ մի ամբողջ ժողովուրդ ոչնչանայ։ Յիսուս պէտք է մեռնէ. նա իւր անձը մեսսիա է համարում։ Դուք ի՞նչ կարծիքի էք, ի՞նչպէս էք հաւանում կայափայի առաջարկած հարցը։ Քահանայեապետի տուած խորհուրդը բառական խորամանկ է, ըստ երևոյթին նա հանդիսանում է ժողովրդին պաշտպան, բայց իրօք իւր անձը,

իւր բարեկամների շահն ի նկատի ունի։ Ինքնահաւանութիւնը մեռցնում է նրա մէջ ամեն մի ճշմարիտ խոստովանութիւն, ուրանում է Յիսուսի մեսսիական կոչումն և անգութ կերպով զրդառում է, որոց անկէ, փրկչի դէմ։

Ի՞նչպէս է վերջանում զործը։ —Բոլոր անդամները համաձայնում են քահանայապետի կալծիքին և Մեսսիալին մահ են վճռում։ Այժմ ամենքն էլ աշխատում են այս որոշումն ի կատար ածել։ Ժողովի վճռուր զաղտնի էր պահւում։ Ի՞նչ միջոցով պէտք է հասնեն իրանց նպատակին ժողովի անդամները։ Ի՞նչպէս էք հաւանում նրանց նպատակը։ Յիսուսն դտնելը մի դժուար բան չէր ~ մինը որ 12 աշակերտներով շրջում է երկրի մէջ. յայտնի կերպով քարոզում է ամենուրեք, կառաւարութիւնից ծածուկ չէր կարող լինել։ Նրանց կարծիքով Յիսուս կիմանար այդ որոշումը և երկրի հեռաւոր անկիւններում թաք կիենար։ Սրանով կամենում էին Յիսուսին վախեցնել, որքէսզի պասեքի տօնին Երուսաղէմ չգայ և կամ թերևս մի ուրիշ երկիր փախչելու միտք յղանայ (այս միտքն անշուշտ Յիսուսին համակրող ատենի չափաւոր անդամները՝ նիկողիմոս և Յովսէփ արիմաթացին յարուցած կլինէին) ու հարցը խաղաղ ճանապարհով կվճռուի ինքն ըստ ինքեան։ Բայց ամենից առաջ կամենում էին ժողովրդին սառցնել, որովհետև երբ լուր կտարածուէր, որ բարձրագոյն ատեանը հրատարակելու է, որ Յիսուս խոստացեալ Մեսսիան չէ, այնուհետև ժողովուրդն էլ՝ մասամբ կթերահաւատանար, մասամբ էլ կակնածէր յարգելու մի անձնաւորութիւն, որին երկրի բարձրագոյն ժողովի անդամները չեն սիրում, ատում են։ Այսպիսով ժողովուրդը հետզհետէ կոսովորէ, կհաշտուի այն մաքի հետ, թէ հրաշագործ մարգարէն մի օր կարող է կալանաւորուել։ Բարձրագոյն ատենի անդամներն իրանց նպատակին հասան. այդ երեսում է տաճարում գտնուած՝ Յիսուսին կուսակից ժողովրդի խօսակցութիւնից։ Ժողովուրդը չէ խօսում այն մասին, թէ ատենի վճռուն իրաւացի, թէ անիրաւացի է, այլ այն մասին, թէ այսպիսի հանգամանքում հալածեալ, արհամարհուած մարգարէն Երուսաղէմ կգայ թէ ոչ։ Փոխանակ կուսակցութիւն կազմելու, լոկ ականատես է հանգիսանում և անվըրդով սրտով սպասում է թէ ինչպէս կվերջանայ վէճը Յիսուսի և բարձրագոյն ատենի մէջ—ժողովուրդն անտարբեր է։

II. բ.

չամախմբել չորս հատուածների էական մասները. խորասուզել գործող անձանց շարժափառի թշնամների մէջ և դատել:

Յիսուսի թշնամիները — փարիսեցիները և սադուգեցիները երկնլոյն նշան էին պահանջում և մեղադրում էին, որ նա սատանաների հետ դաշնակից է — սրանով կամենում էին ժողովրդի սէրն առ Յիսուս նուազեցնել: Բայց Յիսուսի տուած պատասխանը ձեռնախտափ արաւ նրանց: Հերովդէսն ստիպում է փրկչին թողնել ֆալիլիան: Պազարոսի յարութիւնը ատենի անգամների մէջ երկիւղ է ծնեցնում, թէ մի գուցէ ժողովրդական ապստամբութիւն տեղի ունենայ Յիսուսի առաջնորդութեամբ, ուստի Կայափալի խորհրդով մահ էն որոշում կեղծ (նրանց կարծիքով) Մեսսիաին, բայց մի խորամանկ կարգադրութեամբ միջոց են տալիս փրկչին, վէճն առանց արիւնհեղութեան վերջացնելու: Այս միջոցներով ժողովրդին երկիւղ ազգեցին և նա՝ փոխանակ Յիսուսին կուսակից դառնալու, լոկ հանդիսատեսի դեր կատարեց:

Այսպէս վարուող անձանց շարժափառի թշնէ էր: Ի՞նչպէս կդատէք նրանց հայեացները: — Փարիսի սեցին երը նախանձու են, ունայնամէր, վախսնում են, որ զրկուեն իրանց իշխանութիւնից (տ. I. աստիճան) — կարծ այս բոլորը յառաջացաւ զգուելի ինքն ասիրութիւնից: Արդեօք ոչ ոք նրանցից բարի շարժառիթից ստիպուած չէր գործում:

Նեանք բոլորն էլ դաստիարակուած էին նոյնտեսակ ձնողներից և դաստիարակներից, ամենքն էլ նոյն կոյր հետևողներն էին Մօվսիսի օրինաց և դպիրների «յաւելուածների». սրանք ևս կարծում էին, որ կրօնի էական մասն այս արտաքին աւելորդապաշտութիւններն են, որոնք մարդուս երկինքն տանում: Նա՛ ով իրանց նման չէր յարգում օրէնքը և ծերերի աւանդութիւնը՝ յաւելուածները (էին սէրը). նա՛ ով ժողովրդին առիթ կտար այլապէս հասկանալու օրէնքը.... համարւում էր ճշմարիտ հաւատի ոխերիմ թշնամի. այսպիսին ժողովրդին զոգուղ է, ուստի պատերազմը այդպիսի անձնաւորութեան դէմ ամեն մինի սուրբ պարտականութիւնն էր համարւում: Ժողովրդի այս տրամադրութեան ժամանակ եթէ

մինն ասէր, թէ ես եմ աստուածառաք Մեսսիան, ի՞նչ կամէին: — Ստախոսի և խարեբալի տեղ կդնէին, որովհետեւ Ստուած իւր սահմանած սրբազն սովորութիւնները չի վերացնի:

Ուրեմն փարիսեցիներն արդարացի են, երբ կամենում էին Յիսուսին սպանել: — Ոչ, որովհետեւ նրանք չէին մտածում, թէ Ստուածանից ստացած պատուիրանները մարդկանց հնարած թերահաւատութիւններ են դարձել: Այս բանը նրանք շատ լաւ կարող էին գտնել մարգարէից գրուածների մէջ: Յիսուս բազմիցս մատնանիշ էր արել (տ. § ն—ո. 44 և 45), որ արտաքին աստուածպաշտութիւնը կրօնի էական մասը չէ. սա չէ մարդուս երջանիկ անողը: Այդ կոյրերը գոնէ կարող էին Յիսուսի սուրբ, անարատ կեանքն իրանց աչքերով տեսնել. նրա սէրն առ Ստուած և առ ընկերը պիտի համոզէր նրանց, որ այսպիսի կեանք վարող անձն չի կարող Ստուծու թշնամի լինել. նրանք քննութեան տակ չեն ձգում փրկչի քարոզութիւնները և ըստ այնմ հետամուտ լինում նրա վարդապետութեան: Գոնէ այսքանը կարող էին հասկանալ և զիտէին, որ մարդ սպանելը քատմնելի յանցանքներից մինն է: Ինչո՞ւ չէին նկատում Յիսուսի բարի և իրանց չար զործերը, այլ տեսնում էին միայն փրկչի այն արարմունքները, որոնք հակառակ էին իրանց ցանկութեան, որոնք իրանց թերահաւատութեան դէմ էին խօսած և գործած: Թերահաւատութիւնը նրանց մէջ այն աստիճանի սիրելի և արմատացած ցանկութիւն էր, որ նա փոխարինել էր կենդանի հաւատին. Թերահաւատութիւնը նրանց կուրացրել էր, այնպէս որ նրանք միայն վատ բան տեսնելու տրամադրի էին և այդ շատ հասկանալի է, վասնզի Յիսուս այլապէս էր ուսուցանում, քան թէ նրանք, ուստի և իրանց իրաւունք էին համարում ճնշել, նեղել և մինչեւ անգամ մահացնել: Ով այսպիսի կոյր մոլեռանդ սիրով ձգտում է դէպի իւր պաշտած հաւատը, այդպիսին սիսերիմ թշնամի է այն անձին, որն այլապէս է հաւատում. այդպիսիների վարմունքն ուրիշ խօսքով մոլեռանդ դիւն են անուանում: Եւ որովհետեւ այդպիսին կոյր է իւր հակառակորդի մէջ բարի բան տեսնելու, կոյր է դէպի ամեն մի մարդապիրութիւն, ուստի մոռանում է բարոյական պատուիրանը — այսպէս նրանց մոլեռանդ դիւն են դառնում է մի մահացու յան-

յանք: Փարիսեցիների մեծ մասը հալածում էր փրկչին տղեղի ն ք ն ա ս ի ր ո ւ թ ի ւ ն ի ց դրդուած (որ նոյնպէս մարդուս կոյր է գարձնում՝ տեսնելու հակառակորդի մէջ որևէ բարի կողմն), միքանիսը մոլեռն դութիւն ի ց, իսկ ոմանք էլ երկու պատճառներից դրդուած (ինքնասիրութիւն և մոլեռանդութիւն): Հերովդէսի թշնամութիւնն էլ ինքնասիրութիւնից է ծագում:

Ժողովրդի վարմունքը նոյնպէս պախարակելի է: Թէև նրանք բարձրագոյն ատենի կուսակցութեան չեն յարում, բայց Յիսուսից էլ հեռացան երկիւղի ազդեցութեան տակ. նրանք մոռացան փրկչին, որի սէրը վայելել էին և լոկ հանդիսատեսի անտարբեր դերը կատարեցին:

III. ա.

Այս ատելութիւնն ու չարութիւնը ուղղուած Աստուածանից ուղարկուածների դէմ, որոնք մարդոց բարեպաշտ և արդար են կամեցել դարձնել, նոր չէ (տ. Եղիայի և միւս մարդարէների հալածանքը, Յովհաննէս Մկրտչի գլխատումն, նազարէթցիների սպանման փորձը): Այստեղ ևս շարժառիթը ինքնասիրութիւնն է եղել, որը մարդոց մտքերն այն աստիճան կուրացրել է; որ չեն տեսել այդ մարդկանց մէջ բարին և աստուածալինը: (Թանձրացեալ նիւթի մեկնութեան մէջ ի ն ք ն ա ս ի ր ո ւ թ ի ւ ն և ա ր դ ա ր ո ւ թ ի ւ ն բառերի փոխարէն յարմար է իս աւար և լոյս բառերը դորձածել:) Հալածողներից շատ քչերը նկատեցին հալածուողների մէջ աստուածալինը որպէս աստուածալին, իսկ մեծ մասը ինքնասիրութեան ախտով կուրացած աստուածալինը որպէս բարի (լոյս) ինչ չնկատեցին: Ընդհակառակն իրանց կամքի, ցանկութեան ներհակ մի բան տեսան, դրա համար ևս ատեցին որպէս խաւար: Այդ թշնամիներից շատերն ևս Յիսուսի միջի աստուածալինը՝ լոյսը խաւար տեսան, որովհետեւ սրանով իրանց փառքը խորտակում էր, ուստի և ատեցին: Քչերին միայն Յիսուսի լոյսը որպէս աստուածալին երևաց, բայց էլի ատեցին որպէս խաւար—ահա սա է մահացու յանցանքը, սա է սատանալի չարութիւն կոչուածը (տ. Մտթ. ժք. 31—33):

Վերոյիշեալ նկարագրած բոլոր յանցանքները յառաջանում են նրանից, որ մարդէկ սիրել են խաւարը, այսինքն ինք-

նասիրութիւնը, որը կոյր է դէպի բարին, իսկ բարին նրա համար ատելի, զգուելի է դառած լիշած հանդամանքներում, որովհետեւ ինքնասէրների ցանկութիւններին հակառակ է եղել: Նոյն իսկ այսօր ևս Յիսուսի լոյսը կամ բարին, առհասարակ, ունի իւր թշնամին, իսկ խաւար՝ բարեկամներ: Քրիստոնեաների մէջ քրիստոնէութեան թշնամիներ կան, որոնք ծաղրում են մեր հաւատը և մեր աստուածպաշտութիւնը, որովհետեւ նրանք Աստուածուն և նրա որդուն չեն հաւատում իրանց քարոզութեան համաձայն: Այդպիսիք հաւատում են մրայն այն բանին, ինչ որ աչքով կարելի է տեսնել, իսկ աստուածալին լոյսը, որ միայն սրտով պէտք է տեսնել, տնծանօթ է այդպիսեաց: Բայց ինչո՞ւ են այդպէս անում:

— Նրանք սիրում են խաւարը, այսինքն ինքնասիրութիւնը, իսկ սէրը, որ Քրիստոս պահանջում է, այդպիսեաց համար ձեռնտու չէ և ձանձրալի բեռն. սէրը խանգարում է դրանց բաւականութիւնը և երկրաւոր բարիքներ ձեռք բերելուն արգելք է լինում. ինքնասիրութիւնը նրանց այնպէս կուրացնում է, որ իրանց խաւարը՝ լոյս, իսկ Յիսուսի լոյսը՝ խաւար և սխալանք են տեսնում, ուստի և վերջինը բոլորովին արհամարդկում են և ատում: Այսպէս ուրեմն, նոքա որոնք իրանց անձն ամեն բանից աւելի են սիրում, այդպիսիք այսօր ևս ատում են Յիսուսին. նրա սէրն այդպիսիների սիրում աղօտ կերպով է լուսաւորել. այն սէրը, որ նա ցոյց է տուել և պահանջում է, յարաբերում է ինքնասիրութեանն, ինչպէս լոյսը խաւարին (թանձրացեալ օրինակներ):

III. բ.

Մեր ժամանակում ևս կարելի է գտնել շատ մարդիկ, որոնք իրանց վարմունքով խրայէլի ժողովրդին նման են: Դրանք են անտարբեր, թերի կոչուած քրիստոնեաները, որոց մասին խօսեցինք (տ. § 34 39 41.): Այդպիսիք սիրում են և Յիսուսին, և՝ լոյս, և՝ լոյանց, և՝ խաւար. այդպիսիք ծառայում են և Յիսուսին և Աստուածուն ըստ սովորութեան և ոչ սիրուց դրդուած. այդպիսիք կուսակցութիւն չեն՝ կազմում մեծ պատերազմի մէջ, որն այսօր ևս երկրի վրայ լուսով և խաւարի մէջ շարունակում է. այդպիսիք ասում են—մեր մասնակցութիւնից ինչ պիտի գուրս դայ, առանց մեզ ևս զործը կշարունակուի:

Այդպիսի մտածողները պիտի լաւ գիտենան, որ մի անձը ևս նշանակութիւն ունի կուսակցութեան պատերազմի հարցում. այսպէս ասողները հեռու են կանգնում և Աստուծու արքայութեան գործը թլացնում: Ինքնասիրութիւնն է դարձեալ պատճառ, որ անտարբերների սիրու համը մնում լուսոյ և սիրոյ առաջ:

IV.

Յովհ. տ. ժթ. 20. «Զի լոյս եկն յաշխարհ եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս, զի էկն գործք իւրեանց չարութիւն: Զի ամենայ որ զչար գործէ՝ ատեալ զլոյս»:

Մտթ. ժթ. 30. «Որ ոչ ընդիս է, հակառակ իմ է եւ որ ոչ ժողովէ ընդիս՝ ցըուէ»:

V.

Ի՞նչից պիտի երևայ, թէ մինը լոյս կամ խաւար է սիրում: Դու երբ կարող ես Յիսուսի թշնամի լինել: Պոլեռանդութեան ուրիշ օրինակներ չգիտէք (սամարացիք...): Դուք ի՞նչպէս կարող էք նինուէացիներին և հարաւի թագուհուն նմանուիլ:

Մեկնել և վարժել—Եսայի ե. 20 «Այս այնոցիկ ոչք ասիցեն զչարն ըարի, եւ զբարին չար, ոչք դնիցեն զլոյսն խաւար, եւ զխաւարն լոյս, ոչք դնիցեն զգառն քաղցր, եւ զքաղցրն դառն»:

I. ժթ. Յովհ. ա. 5—7 «Եւ այսեն աւետիք զոր լուաք առի նմանէ եւ պատմեմք ձեզ. զի Աստուած լոյս է եւ խաւար ի նմա չիք եւ ոչ մի: Եթէ ասեցիմք՝ եթէ հազարդութիւն ունիմք ընդ նմա, եւ ի խաւարի շրջնցիմք, ատեմք եւ ոչ առնեմք, զնշարտութիւն: Իսկ եթէ ընդ լոյս գնացեմք՝ որպէս նա ի լոյս է, հազարդութիւն ունիմք ընդ միմեանս եւ արիւն Յիսուսի որդուոյ նորա սրբէ զմեղ յամենայն մեղաց»:

I. ժթ. Յովհ. բ. 8—11. «Գիարձեալ նոր պատուիրան զրեմ ձեզ որ է ճշմարտիւ ի նմա եւ ոչ ի ձեզ. զի խաւարն անցանէ, եւ լոյսն ճշմարիտ արդէն երևի: Որ ասէ, եթէ ի լոյսն իցէ եւ եղբայր իւր ատիցէ, սուտ է եւ ի խաւարի է տակաւին:»

Թ. ա. Հում. ժդ. 12 «Գիշերն մերժեցաւ եւ տիւն մերձեցաւ. իւրաց արացուք այսուհետեւ զգործոն խաւարի եւ զգեցցուք զգէն լուսոյ»:

Յովհ. ա. 5. դ. 20, 21. ժթ. 35, 36
Վարժութիւն ունի լոյս աշխարհի...»:
«Զի արմատ ամենայն չարեաց....»:
«Մի սիրէք զաշխարհս....»:
«Յիւրան եկն եւ իւրքն....»:
«Ոչ միայն հացիւ կեցցէ....»:
«Սիրեացես զընկեր քո....»:
«Բայց եթէ ինչ ի Քրիստոս, նոր...»:
«Զի եւ Քրիստոս վասն ձեր մեռաւ....»:
«Եւ իմաստունք ծագեացին....»:

§ 49

ՅԻՍՈՒՍ ՅԹԻՌԻՄ Կ ԲԵԹԱՆԻԱՅՈՒՄ

Նուատակ: Վերնադիրը.—

I.

Յիսուս Բեթանիայումն է—նա շատ հեռի չէ Երուսաղէմից. բարձրագոյն ատենի վճռի վրայ ոչինչ ուշագրութիւն չէ դարձնում: Բեթանիայում օծուելն ինչ նշանակութիւն ունի: Յովորաբար օծում էին թագաւորներին (զորօրինակ Սաւուդ, Դաւիթ...), մեռեալներին (զմռսել), բարձր հիւրերին, որոց ոտները լուանում էին և ապա օծում մարմինը, երեմն թանկագին իւղերով, ինչպէս մեղաւոր կինը Յիսուսին օծեց: Բայց այս պատույ արտայալութիւններն և հիւրասիրութեան նշաններն ամենեւին չեն յարմարում Յիսուսի օծման: Յիսուս Բեթանիայում ում մօտ պիտի հիւր եղած լինի. ով պիտի նրան օծած լինի:

II.

Աւանդել նոր նիւթը—(Յովհ. ժթ. տ. Մըկ. ժդ. Մտթ. իդ.): Յիսուս իւր բարեկամների շրջանում մեղան է նստած. նա յուզուած է—ներքինը լի է ուրախ և տիսուր մտածմունքներով: Ղազարոսի սկըն առ Յիսուս և նրա ուրախ, զուարթ դէմքը չէին կսրող փրկչին յուղող մտքերն առ ժամ մոռացութեան չտալ: Մարթայի եւանդը, պատուելու թանկագին հիւրին, նոյն տպաւորութիւնը պէտք է անէին, իսկ Մարիամի բարեպաշտ վարմունքն այնքան սիրելի էր, որ միայն ուրախանալ և խնդալ կարելի էր: Թէև այս այսպէս էր, բայց և այնպէս նա չէր

կարող մօռանալ և չմտածել մի բոպէ այն վտանգների մասին,
որոնք կարճ ապագայի մէջ վերջ պիտի դնէին իւր կեանքին:
Միւլունոյն տրամադրութիւնն անշուշտ նրա բարեկամները կու-
նենալին. նրանք տխուր են զալոցի վերաբերութեամբ, բայց
միւս կողմից Յիսուսի հեղ և սիրալիր խօսքերը մօռացնել է
տալիս ամենայն ինչ: Մարիամն ամենից աւելի խորն է ըմ-
բռնում իրողութիւնը. թանկագին հիւրերի համար ոչինչ չէ
խնայում. փղձկում է նրա առաջ իւր սիրտը. չէ խնայում թան-
կագին իւղը (60 որդ. արժողութեամբ) տիրոջն օծելու համար:
Այս բանը Յուգան չէ հաւանում — շռալութիւն է համարում:
Նրա կարծիքով աւելի յարմար էր այդ փողը գործ դնել աղ-
քատներին կերակրելու համար: Արդեօք ճիշտ չէ Յուգայի
առաջարկութիւնը — (50 ուռելու ինչքան հայ կարելի էր դնել:
Յուգան ուշք է զարձնում միայն արտաքինի վրայ:

Թեթև աչքով նայելով զործին՝ արդարեւ շռալութիւն է
երեւում, բայց նրա աչքերից անտես է մնում Մարիամի ներ-
քինը, որտեղից բղխում է այդ վարմունքը — նա մտածում է
միայն այն բանի վրայ, ինչ որ օգտաւէտ է, շահաւէտ է: Նրան
անյատ է մնում զիսաւորը, թէ ինչ մեծ ուրախութիւն է պատ
ճառում Յիսուսին այս վարմունքը՝ այսպիսի մի տխուր բոպէի
մէջ (ինչ ուրախութիւն է պատճառում մեզ հիւանդ ժամա-
նակներս, երբ մեր սիրելիներից մինը մի ընծալ է բերում մեղ):

Մարիամը լուռ է. ոչինչ չէ պատասխանում. նա իւր հայ-
եացքը յառել է տիրոջ և կարծես ուզում է ասել — ասա այն
խիստ մարդուն, որ ես դրանով իմ սէրը միայն կամենում եմ
ցոյց տալ և սա յանցանք չէ կարող համարուիլ. ես աղքատ-
ներին էլ կարող եմ սիրել: Մարիամը մտածում է այն՝ ինչ որ
Յիսուսն էր մտածում: Փրկիչն ասում է, Մարիամը գովասանքի
է արժանի, վասնզի բարի գործ գործեց. նրա կատարածը
բղխում է բարի, ազնիւ մտածողութիւնից: Դուք այդ բանը
չէք կարող ըմբռնել. դուք այնքան սէր չունիք դէպի ինձ.
դուք չգիտէք նրա վարմունքն ինչպիսի ուրախութիւն է պատ-
ճառում ինձ այս տխուր վարկենիս մէջ, երբ ամենքն ինձ հա-
լածում են: Աղքատներին ամեն ժամանակ կարող էք օգնել,
երբ դուք կուսանէք իմ ցոյց տուած սիրելու եղանակը. նրանք
շարունակ ձեր աչքի առաջ են, իսկ ես կարճ ժամանակով եմ

16n.

2013

0027068

389, 390, 391

«Ազգային գրադարան»



«Ազգային գրադարան»



«Ազգային գրադարան»



0027071

աշխարհ, հ. բ, սառ 5

աշխարհ, հ. բ, սառ 5

աշխարհ, հ. բ, սառ 5

